

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 թվականի ապրիլի 27-ի  
2015/1187 ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՀ)**

**«Պինդ վառելիքով աշխատող կաթսաների եւ պինդ վառելիքով աշխատող կաթսայից, լրացուցիչ տաքացուցիչներից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած համալիր սարքավորումների էներգապիտակավորման մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2010/30/ԵՄ հրահանգը լրացնող (Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը, հաշվի առնելով «Պիտակավորման եւ արտադրանքի ստանդարտ տեխնիկական բնութագրի միջոցով էլեկտրաէներգիայի արտադրության հետ կապված արտադրանքի կողմից էներգիայի եւ այլ ռեսուրսների սպառման վերաբերյալ նշում կատարելու մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2010 թվականի մայիսի 19-ի 2010/30/ԵՄ հրահանգը<sup>1</sup> եւ մասնավորապես՝ դրա 10-րդ հոդվածը,

քանի որ՝

- 1) 2010/30/ԵՄ հրահանգով պահանջվում է, որ Հանձնաժողովն ընդունի պատվիրակված ակտեր էլեկտրաէներգիայի արտադրության հետ կապված այն արտադրանքի պիտակավորման վերաբերյալ, որն ունի էներգախնայողության զգալի ներուժ եւ համարժեք ֆունկցիոնալությամբ արդյունավետության համապատասխան մակարդակներում էական տարբերություններ.

---

<sup>1</sup> ՊՏ L 153, 18.6.2010թ., էջ 1:

- 2) համարժեք ֆունկցիոնալությամբ սենքի տաքացուցիչները, այդ թվում՝ պինդ վառելիքով աշխատող կաթասներն էներգաարդյունավետության առումով ցուցադրում են էական տարբերություններ: Փակ տարածքների տաքացումն ապահովելու համար պինդ վառելիքով աշխատող կաթասների կողմից օգտագործվող էներգիան կազմում է Միությունում էներգիայի ընդհանուր պահանջարկի զգալի մասնաբաժինը: Պինդ վառելիքով աշխատող կաթասների էներգասպառումը նվազեցնելու հնարավորությունները զգալի են եւ ներառում են համապատասխան ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերի հետ համակցումը, եւ հետեւաբար էներգապիտակավորման պահանջները պետք է տարածվեն նաեւ պինդ վառելիքով աշխատող կաթայից, լրացուցիչ տաքացուցիչներից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած համալիր սարքավորումների վրա.
- 3) բացառապես խմելու եւ կոմունալ-կենցաղային նպատակներով օգտագործվող տաք ջուր ապահովելու համար ջերմություն արտադրող կաթասները, գազային ջերմակրի տաքացման համար նախատեսված կաթասները, 50 կՎտ կամ ավելի էլեկտրական հզորություն ունեցող կոգեներացման կաթասները եւ ոչ փայտային կենսազանգվածով աշխատող կաթասներն ունեն հատուկ տեխնիկական բնութագրեր եւ հետեւաբար պետք է հանվեն սույն կանոնակարգի գործողության ոլորտից.
- 4) պետք է սահմանվեն պինդ վառելիքով աշխատող կաթասների պիտակավորման եւ էներգաարդյունավետության վերաբերյալ ստանդարտ տեղեկությունների մասին ներդաշնակեցված դրույթներ՝ արտադրողների համար պինդ վառելիքով աշխատող կաթասների էներգաարդյունավետությունը բարելավելու խթան ապահովելու, վերջնական սպառողներին էներգախնայող արտադրանք ձեռք բերել խրախուսելու եւ ներքին շուկայի գործունեությանը նպաստելու նպատակով.
- 5) սպառողներին պինդ վառելիքով աշխատող կաթասների վերաբերյալ համեմատական տեղեկություններ տրամադրելու նպատակով պետք է

ներդրվի պիտակավորման սանդղակ՝ Հանձնաժողովի թիվ 811/2013 պատվիրակված կանոնակարգին (ԵՄ)<sup>2</sup> համապատասխան: Այդ կանոնակարգում վերականգնվող էներգիայի նկատմամբ կիրառվող մոտեցումն օգտագործելը չի խթանի կենսազանգվածով աշխատող կաթսաների էներգաարդյունավետությունը: Կենսազանգվածի դեպքում հանածո վառելիքի նկատմամբ կիրառվող մոտեցումն օգտագործելը չի համապատասխանի վերականգնվող էներգիայի խթանմանն ուղղված նպատակին՝ սահմանված Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009/28/ԵՀ հրահանգով<sup>3</sup>: Հետեաբար անհրաժեշտ է, որ սույն կանոնակարգով ներդրվեն կենսազանգվածով աշխատող կաթսաների նկատմամբ հատուկ մոտեցում՝ «կենսազանգվածի պիտակի գործակից»՝ սահմանված այնպիսի մակարդակով, որը հնարավորություն կտա կենսազանգվածով աշխատող կաթսաները կոնդենսացնելու միջոցով հասնել A++ դասի.

- 6) Էկոնախագծման պահանջներ սահմանելու նպատակով պիտակի վրա ներկայացված տեղեկությունները պետք է ստացվեն չափման և հաշվարկման հուսալի, ճշգրիտ և վերարտադրելի մեթոդների միջոցով, որոնք հիմնվում են հաշվարկման և չափման համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից մեթոդների, այդ թվում՝ առկայության դեպքում՝ ստանդարտացման Եվրոպական կազմակերպությունների կողմից Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 1025/2012 (ԵՄ)

---

<sup>2</sup> «Սենքի տաքացուցիչների, համակցված տաքացուցիչների, սենքի տաքացուցից, ջերմաստիճանի կարգավորման և արեային սարքերից բաղկացած համալիր սարքավորումների, ինչպես նաև համակցված տաքացուցից, ջերմաստիճանի կարգավորման և արեային սարքերից բաղկացած համալիր սարքավորումների էներգապիտակավորման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2010/30/ԵՄ հրահանգը լրացնող՝ Հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 18-ի թիվ 811/2013 պատվիրակված կանոնակարգ (ԵՄ) (ՊՏ L 239, 6.9.2013թ., էջ 1):

<sup>3</sup> «Վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի օգտագործումը խթանելու մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի ապրիլի 23-ի 2009/28/ԵՀ հրահանգ (ՊՏ L 140, 5.6.2009թ., էջ 16):

կանոնակարգում<sup>4</sup> սահմանված ընթացակարգերին համապատասխան ընդունված ներդաշնակեցված չափանիշների վրա.

- 7) սույն կանոնակարգով պետք է սահմանվի պինդ վառելիքով աշխատող կաթսաների պիտակների միասնական ձեռք բովանդակություն.
- 8) բացի այդ, սույն կանոնակարգով պետք է սահմանվեն պինդ վառելիքով աշխատող կաթսաների արտադրանքի տեղեկաթերթիկին եւ տեխնիկական փաստաթղթերին ներկայացվող պահանջներ.
- 9) ավելին, սույն կանոնակարգով պետք է սահմանվեն պինդ վառելիքով աշխատող կաթսաների հեռակա վաճառքի ցանկացած տեսակի դեպքում եւ պինդ վառելիքով աշխատող կաթսաների ցանկացած գովազդում եւ տեխնիկական գովազդային նյութերում տրամադրվելիք տեղեկություններին ներկայացվող պահանջներ.
- 10) եթե պիտակները եւ արտադրանքի վերաբերյալ տեղեկությունները հիմնված են մատակարարների կողմից տրամադրված արտադրանքի տեղեկաթերթիկների վրա, ապա պետք է ապահովվի, որ լրացուցիչ տաքացուցիչների, արեւային սարքերի եւ ջերմաստճանի կարգավորման սարքերի հետ համակցված՝ պինդ վառելիքով աշխատող կաթսայից բաղկացած համալիր սարքավորումների էներգաարդյունավետության վերաբերյալ տեղեկությունները մատչելի լինեն վերջնական սպառողների համար.
- 11) անհրաժեշտ է նախատեսել սույն կանոնակարգի դրույթների վերանայումը՝ հաշվի առնելով տեխնոլոգիական առաջընթացը,

---

<sup>4</sup> Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի «Եվրոպական ստանդարտացման մասին» 2012 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 1025/2012 կանոնակարգ (ԵՄ) (ՊՏ L 316, 14.11.2012թ., էջ 12):

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

### Հոդված 1

#### **Կարգավորման առարկան եւ գործողության ոլորտը**

1. Սույն կանոնակարգով սահմանվում են 70 կՎտ կամ դրանից քիչ դրվածքային հզորությամբ պինդ վառելիքով աշխատող կաթսաների, ինչպես նաեւ 70 կՎտ կամ դրանից քիչ դրվածքային ջերմային հզորությամբ պինդ վառելիքով աշխատող կաթսայից, լրացուցիչ տաքացուցիչներից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած համալիր սարքավորումների էներգապիտակավորմանը եւ դրանց վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների տրամադրմանը ներկայացվող պահանջները:
2. Սույն կանոնակարգը չի կիրառվում հետեւյալի նկատմամբ՝
  - ա) միայն խմելու կամ կոմունալ-կենցաղային նպատակներով օգտագործվող տաք ջրի մատակարարման նպատակով ջերմություն արտադրող կաթսաների.
  - բ) կաթսաներ՝ նախատեսված այնպիսի գազային ջերմակրի տաքացման եւ բաշխման համար, ինչպիսին գոլորշին կամ օդն է.
  - գ) 50 կՎտ կամ ավելի առավելագույն էլեկտրական հզորություն ունեցող՝ պինդ վառելիքով աշխատող կոգեներացման կաթսաների.
  - դ) ոչ փայտային կենսազանգվածով աշխատող կաթսաների:

## Հոդված 2

### Սահմանումները

Ի լրումն 2010/30/ԵՄ հրահանգի 2-րդ հոդվածով սահմանված սահմանումների՝ սույն կանոնակարգի նպատակներով կիրառվում են հետեւյալ սահմանումները.

- 1) «պինդ վառելիքով աշխատող կաթսա» նշանակում է պինդ վառելիքով աշխատող մեկ կամ ավելի ջերմագեներատորներով համալրված սարք, որը ջերմություն է ապահովում ջրային կենտրոնական ջեռուցման համակարգին մեկ կամ ավելի փակ տարածքների ներսենյակային պահանջված ջերմաստիճանի հասնելու եւ այն պահպանելու նպատակով՝ շրջակա միջավայրում ոչ ավելի, քան 6 % ջերմության կորստով.
- 2) «ջրային կենտրոնական ջեռուցման համակարգ» նշանակում է համակարգ, որի դեպքում ջուրը՝ որպես ջերմակիր, օգտագործվում է կենտրոնական համակարգում արտադրված ջերմությունը շենքերի կամ դրանց առանձին հատվածների փակ տարածքների ջեռուցման համար, այդ թվում՝ մի քանի շենքերի կամ թաղամասերի ջեռուցման ցանցերին բաշխելու նպատակով.
- 3) «պինդ վառելիքով աշխատող ջերմագեներատոր» նշանակում է պինդ վառելիքով աշխատող կաթսա, որը ջերմությունն արտադրում է պինդ վառելիքների այրման միջոցով.
- 4) «դրվածքային ջերմային հզորություն» կամ «P<sub>դ</sub>» նշանակում է պինդ վառելիքով աշխատող կաթսաների հայտարարված դրվածքային ջերմային հզորությունը նախընտրելի վառելիքով փակ տարածությունների ջեռուցումն ապահովելիս՝ արտահայտված կՎտ-ով.
- 5) «պինդ վառելիք» նշանակում է վառելիք, որը պինդ է սովորական սենյակային ջերմաստիճանում, այդ թվում՝ պինդ կենսազանգված եւ պինդ հանածո վառելիք.
- 6) «կենսազանգված» նշանակում է գյուղատնտեսական (ներառյալ բուսական եւ կենդանական ծագման նյութերը), անտառաբուծության եւ հարակից

արդյունաբերություններից, այդ թվում՝ ձկնաբուծությունից եւ ջրային կուլտուրաներից կենսաբանական ծագման արտադրանքի, թափոնների եւ մնացորդների կենսաքայքայվող մասը, ինչպես նաեւ արդյունաբերական եւ քաղաքային թափոնների կենսաքայքայվող մասը.

- 7) «փայտային կենսազանգված» նշանակում է կենսազանգված, որն առաջացել է ծառերից, թփերից ու թփուտներից, այդ թվում՝ գերաններից, փայտի տաշեղներից, պելետների տեսքով սեղմված փայտից, բրիկետների տեսքով սեղմված փայտից եւ փայտաթեփից.
- 8) «ոչ փայտային կենսազանգված» նշանակում է փայտային կենսազանգվածից բացի այլ կենսազանգված, այդ թվում՝ ծղոտ, չինական եղեգ, շամբ, կորիզներ, հատիկներ, ձիթապտղի կորիզ, ձիթապտղի քուսպ եւ ընկուզեղենի կեղեւ.
- 9) «հանածո վառելիք» նշանակում է կենսազանգվածից բացի այլ վառելիք, այդ թվում՝ անթրացիտ, գորշ ածուխ, կոքս, բիտումային ածուխ. սույն կանոնակարգի նպատակներով այն նաեւ ներառում է տորֆ.
- 10) «կենսազանգվածով աշխատող կաթսա» նշանակում է պինդ վառելիքով աշխատող կաթսա, որը որպես նախընտրելի վառելիք օգտագործում է կենսազանգված.
- 11) «ոչ փայտային կենսազանգվածով աշխատող կաթսա» նշանակում է կենսազանգվածով աշխատող կաթսա, որը որպես նախընտրելի վառելիք օգտագործում է ոչ փայտային կենսազանգված, եւ որի համար փայտային կենսազանգվածը, հանածո վառելիքը կամ կենսազանգվածի եւ հանածո վառելիքի խառնուրդը թվարկված չեն դրա համար հարմար այլ վառելիքների շարքում.
- 12) «նախընտրելի վառելիք» նշանակում է պինդ վառելիքի այն միակ տեսակը, որը, համաձայն մատակարարի հրահանգների, նախընտրելի է, որ օգտագործվի կաթսայի համար.

- 13) «այլ համապատասխան վառելիք» նշանակում է նախընտրելի վառելիքից բացի այլ պինդ վառելիք, որը, համաձայն մատակարարի հրահանգների, կարող է օգտագործվել պինդ վառելիքով աշխատող կաթսայի մեջ եւ ներառում է ցանկացած վառելիք, որը նշված է տեղադրողների եւ վերջնական սպառողների համար նախատեսված հրահանգների ձեռնարկում, արտադրողների եւ մատակարարների ազատ հասանելիություն ունեցող կայքերում, տեխնիկական գովազդային նյութերում եւ գովազդներում.
- 14) «պինդ վառելիքի կոգեններացման կաթսա» նշանակում է պինդ վառելիքով աշխատող կաթսա, որն ունակ է միաժամանակ ջերմություն եւ էլեկտրաէներգիա արտադրելու.
- 15) «լրացուցիչ տաքացուցիչ» նշանակում է օժանդակ կաթսա կամ ջերմային պոմպ, որը կարգավորվում է թիվ 811/2013 պատվիրակված կանոնակարգի (ԵՄ) գործողության ոլորտով, կամ պինդ վառելիքով աշխատող օժանդակ կաթսա, որն արտադրում է հավելյալ ջերմություն այն դեպքում, երբ ջերմության պահանջարկն ավելի մեծ է, քան պինդ վառելիքով աշխատող առաջնային կաթսայի դրվածքային ջերմային հզորությունը.
- 16) «ջերմաստիճանի կարգավորման սարք» նշանակում է սարքավորում, որի միջոցով փակ տարածքի օդի ցանկալի ջերմաստիճանի արժեքների եւ ժամանակացույցի մասով կապ է հաստատվում վերջնական սպառողների հետ, եւ համապատասխան տվյալները հաղորդվում են պինդ վառելիքով աշխատող կաթսայի միջերեսին, ինչպես օրինակ՝ կենտրոնական մշակիչ սարքին՝ այդպիսով նպաստելով փակ տարածքի օդի ջերմաստիճանի (ջերմաստիճանների) կարգավորմանը.
- 17) «արեւային սարք» նշանակում է միայն արեւային էներգիայով աշխատող համակարգ, արեւային կուտակիչ, արեւային էներգիայով աշխատող ունակային ջրատաքացուցիչ կամ կուտակիչի հանգույցում գտնվող պոմպ, որոնք շուկայահանվում են առանձին.



- 18) «միայն արեւային էներգիայով աշխատող համակարգ» նշանակում է սարք, որը սարքավորված է մեկ կամ ավելի արեւային կուտակիչներով եւ արեւային ունակային ջրատաքացուցիչներով ու հնարավորության դեպքում՝ կուտակիչի համակարգին միացված պոմպով կամ այլ մասերով, որոնք շուկայահանվում են որպես մեկ ամբողջություն եւ սարքավորված չեն որեւէ ջերմագեներատորով՝ բացառությամբ գուցե մեկ կամ ավելի ընկղմվող երկդիրք էլեկտրատաքացուցիչների.
- 19) «արեւային կուտակիչ» նշանակում է սարք, որը նախատեսված է արեւային ճառագայթման ընդհանուր լուսավորությունը կլանելու եւ այդ եղանակով արտադրված ջերմությունը դրանով անցնող հեղուկին փոխանցելու համար.
- 20) «արեւային ունակային ջրատաքացուցիչ» նշանակում է ունակային ջրատաքացուցիչ, որում կուտակվում է մեկ կամ ավելի արեւային կուտակիչների կողմից արտադրված ջերմային էներգիան.
- 21) «ունակային ջրատաքացուցիչ» նշանակում է ջրատաքացման կամ տարածքի ջեռուցման նպատակով տաք ջուր, այդ թվում՝ ցանկացած հավելանյութ կուտակելու համար նախատեսված կոնտեյներ, որը սարքավորված չէ որեւէ ջերմագեներատորով՝ բացառությամբ գուցե մեկ կամ ավելի երկդիրք ընկղմվող էլեկտրատաքացուցիչների.
- 22) «երկդիրք ընկղմվող էլեկտրատաքացուցիչ» նշանակում է Ջոուլի էֆեկտի համաձայն աշխատող՝ էլեկտրական դիմադրությամբ տաքացուցիչ, որը կազմում է ունակային ջրատաքացուցչի մաս եւ արտադրում է ջերմություն միայն այն դեպքում, երբ խափանվում է ջերմության մատակարարման արտաքին աղբյուրի աշխատանքը (այդ թվում՝ տեխնիկական սպասարկման եւ վերանորոգման ժամանակահատվածում) կամ սարքին վիճակում չէ, կամ որը կազմում է արեւային էներգիայով աշխատող ունակային ջրատաքացուցչի մաս եւ ապահովում է ջերմություն այն դեպքում, երբ ջերմության արեւային աղբյուրը բավարար չէ հարմարավետության անհրաժեշտ մակարդակն ապահովելու համար.

- 23) «պինդ վառելիքով աշխատող կաթսայից, լրացուցիչ տաքացուցիչներից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած համալիր սարքավորում» նշանակում է վերջնական սպառողին առաջարկվող համալիր սարքավորում, որը պարունակում է մեկ կամ ավելի լրացուցիչ տաքացուցիչների, մեկ կամ ավելի ջերմաստիճանի կարգավորման սարքերի կամ մեկ կամ ավելի արեւային սարքերի հետ համակցված՝ պինդ վառելիքով աշխատող կաթսա.
- 24) «համակցված կաթսա» նշանակում է պինդ վառելիքով աշխատող կաթսա, որը նախատեսված է նաեւ տրված պարբերականությամբ որոշակի ջերմաստիճանային մակարդակով, քանակությամբ եւ հոսքի արագությամբ խմելու կամ կոմունալ-կենցաղային նպատակներով օգտագործվող տաք ջրի մատակարարման համակարգին ջերմություն հաղորդելու համար եւ միացված է խմելու կամ կոմունալ-կենցաղային նպատակներով օգտագործվող ջրի արտաքին աղբյուրին.

II-X հավելվածների նպատակներով լրացուցիչ սահմանումները տրված են I հավելվածում:

### Հոդված 3

#### **Մատակարարների պարտականությունները եւ ժամանակացույցը**

1. 2017 թվականի ապրիլի 1-ից մատակարարները, որոնք շուկայահանում են պինդ վառելիքով աշխատող կաթսաներ կամ հանձնում են դրանք շահագործման, այդ թվում՝ այն կաթսաները, որոնք ընդգրկված են պինդ վառելիքով աշխատող կաթսայից, լրացուցիչ տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած համալիր սարքավորումների կազմում, ապահովում են, որ՝
  - ա) պինդ վառելիքով աշխատող յուրաքանչյուր կաթսա ապահովվի III հավելվածի 1.1 կետում նշված ձեւաչափով եւ տեղեկություններ պարունակող, ինչպես նաեւ II հավելվածով սահմանված

- էներգաարդյունավետության դասերին համապատասխանող տպագիր պիտակով, եւ պինդ վառելիքով աշխատող կաթսայից, լրացուցիչ տաքացուցիչներից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած համալիր սարքավորումների կազմում օգտագործման համար նախատեսված՝ պինդ վառելիքով աշխատող յուրաքանչյուր կաթսա ապահովվի III հավելվածի 2-րդ կետով սահմանված ձեւաչափով եւ տեղեկություններ պարունակող երկրորդ պիտակով.
- բ) պինդ վառելիքով աշխատող կաթսայի յուրաքանչյուր մոդելի համար վաճառողներին տրամադրվի III հավելվածի 1.1 կետով սահմանված ձեւաչափով եւ տեղեկություններ պարունակող եւ II հավելվածով սահմանված էներգաարդյունավետության դասերին համապատասխանող էլեկտրոնային պիտակ.
- գ) արտադրանքի տեղեկաթերթիկը, IV հավելվածի 1-ին կետին համապատասխան, տրամադրվի պինդ վառելիքով աշխատող յուրաքանչյուր կաթսայի համար, իսկ երկրորդ տեղեկաթերթիկը, IV հավելվածի 2-րդ կետին համապատասխան, տրամադրվի պինդ վառելիքով աշխատող կաթսայից, լրացուցիչ տաքացուցիչներից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած համալիր սարքավորումների կազմում օգտագործման համար նախատեսված՝ պինդ վառելիքով աշխատող յուրաքանչյուր կաթսայի համար.
- դ) պինդ վառելիքով աշխատող կաթսայի յուրաքանչյուր մոդելի համար, IV հավելվածին համապատասխան, վաճառողներին տրամադրվի արտադրանքի էլեկտրոնային տեղեկաթերթիկ.
- ե) տեխնիկական փաստաթղթերն ըստ պահանջի տրամադրվեն անդամ պետությունների մարմիններին եւ Հանձնաժողովին, ինչպես սահմանված է V հավելվածի 1-ին կետում.

- զ) պինդ վառելիքով աշխատող կաթսայի կոնկրետ մոդելին վերաբերող եւ էներգասպառման կամ էներգաարդյունավետության կամ գնի մասին տեղեկություններ պարունակող ցանկացած գովազդ ներառի այդ մոդելի համար էներգաարդյունավետության դասի մասին նշում.
- է) պինդ վառելիքով աշխատող կաթսայի կոնկրետ մոդելին վերաբերող եւ դրան բնորոշ տեխնիկական պարամետրերը նկարագրող ցանկացած տեխնիկական գովազդային նյութ ներառի այդ մոդելի համար էներգաարդյունավետության դասի մասին նշում:
2. 2019 թվականի սեպտեմբերի 26-ից մատակարարները, որոնք շուկայահանում են պինդ վառելիքով աշխատող կաթսաներ կամ հանձնում են դրանք շահագործման, այդ թվում՝ այն կաթսաները, որոնք ընդգրկված են պինդ վառելիքով աշխատող կաթսայից, լրացուցիչ տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեային սարքերից բաղկացած համալիր սարքավորումների կազմում, ապահովում են, որ՝
- ա) պինդ վառելիքով աշխատող յուրաքանչյուր կաթսա ապահովվի III հավելվածի 1.2 սահմանված ձեւաչափով եւ տեղեկություններ պարունակող, ինչպես նաեւ II հավելվածով սահմանված էներգաարդյունավետության դասերին համապատասխանող տպագրված պիտակով.
- բ) պինդ վառելիքով աշխատող կաթսայի յուրաքանչյուր մոդելի համար վաճառողներին տրամադրվի III հավելվածի 1.2 կետով սահմանված ձեւաչափով եւ տեղեկություններով, ինչպես նաեւ II հավելվածով սահմանված էներգաարդյունավետության դասերին համապատասխանող էլեկտրոնային պիտակ:
3. 2017 թվականի ապրիլի 1-ից մատակարարները, որոնք շուկայահանում են պինդ վառելիքով աշխատող կաթսայից, լրացուցիչ տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեային սարքերից բաղկացած

համալիր սարքավորումներ կամ հանձնում են դրանք շահագործման, ապահովում են, որ՝

- ա) պինդ վառելիքով աշխատող կաթսայից, լրացուցիչ տաքացուցիչներից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած յուրաքանչյուր համալիր սարքավորման համար տրամադրվի III հավելվածի 1.1 կետում նշված ձեւաչափով եւ տեղեկություններ պարունակող, ինչպես նաեւ II հավելվածով սահմանված էներգաարդյունավետության դասերին համապատասխանող տպագիր պիտակ.
- բ) պինդ վառելիքով աշխատող կաթսայի յուրաքանչյուր մոդելի համար վաճառողներին տրամադրվի III հավելվածի 2-րդ կետով սահմանված ձեւաչափով եւ տեղեկություններով, ինչպես նաեւ II հավելվածով սահմանված էներգաարդյունավետության դասերին համապատասխանող էլեկտրոնային պիտակ.
- գ) պինդ վառելիքով աշխատող կաթսայից, լրացուցիչ տաքացուցիչներից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած յուրաքանչյուր համալիր սարքավորման համար, IV հավելվածի 2-րդ կետին համապատասխան, տրամադրվի արտադրանքի տեղեկաթերթիկ.
- դ) պինդ վառելիքով աշխատող կաթսայից, լրացուցիչ տաքացուցիչներից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած համալիր սարքավորումների յուրաքանչյուր մոդելի համար վաճառողներին տրամադրվի արտադրանքի էլեկտրոնային տեղեկաթերթիկ՝ IV հավելվածի 2-րդ կետին համապատասխան.
- ե) տեխնիկական փաստաթղթերն ըստ պահանջի տրամադրվեն անդամ պետությունների մարմիններին եւ Հանձնաժողովին՝ V հավելվածի 2-րդ կետին համապատասխան.

- զ) պինդ վառելիքով աշխատող կաթսայից, լրացուցիչ տաքացուցիչներից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած համալիր սարքավորման կոնկրետ մոդելին վերաբերող եւ էներգիայի սպառման կամ գնի մասին տեղեկություններ պարունակող ցանկացած գովազդ ներառի այդ մոդելի համար էներգաարդյունավետության դասի մասին նշում.
- է) պինդ վառելիքով աշխատող կաթսայից, լրացուցիչ տաքացուցիչներից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած համալիր սարքավորման կոնկրետ մոդելին վերաբերող եւ եւ դրան բնորոշ տեխնիկական պարամետրերը նկարագրող տեխնիկական գովազդային ցանկացած նյութ ներառի այդ մոդելի համար էներգաարդյունավետության դասի մասին նշում.

#### Հոդված 4

#### **Վաճառողների պարտականությունները**

1. Պինդ վառելիքով աշխատող կաթսաների վաճառողներն ապահովում են, որ՝
  - ա) վաճառքի կետում պինդ վառելիքով աշխատող յուրաքանչյուր կաթսա իր առջեւի մասի արտաքին մակերեսային, 3(1) հոդվածին եւ 3(2) հոդվածին համապատասխան, կրի մատակարարների կողմից տրամադրված պիտակն այնպես, որ այն հստակորեն տեսանելի լինի.
  - բ) վաճառքի, վարձակալության կամ ապառիկ վաճառքի համար առաջարկված պինդ վառելիքով աշխատող կաթսաները, որոնց դեպքում չի կարող ակնկալվել, որ վերջնական սպառողն արտադրանքը կտեսնի ցուցադրված վիճակում, շուկայահանվեն մատակարարների կողմից VI հավելվածի 1-ին կետի համաձայն տրամադրված տեղեկություններով՝ բացառությամբ այն դեպքի, երբ առաջարկը ներկայացվել է համացանցի միջոցով, որի դեպքում կիրառվում են VII հավելվածի դրույթները.

- գ) պինդ վառելիքով աշխատող կաթսայի կոնկրետ մոդելի համար ցանկացած գավազդ, որը պարունակում է էներգասպառման կամ գնի մասին տեղեկություններ, ներառի այդ մոդելի համար էներգաարդյունավետության դասի մասին նշում.
- դ) պինդ վառելիքով աշխատող կաթսայի կոնկրետ մոդելին վերաբերող եւ դրան բնորոշ տեխնիկական պարամետրերը նկարագրող ցանկացած տեխնիկական գովազդային նյութ ներառի այդ մոդելի համար էներգաարդյունավետության դասի մասին նշում:
2. Պինդ վառելիքով աշխատող կաթսաներից, լրացուցիչ տաքացուցիչներից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած համալիր սարքավորումների վաճառողներն ապահովում են, որ՝
- ա) կոնկրետ համալիր սարքավորման համար արված ցանկացած առաջարկ ներառի այդ համալիր սարքավորման էներգաարդյունավետության դասը՝ համալիր սարքավորման վրա ցուցադրելով մատակարարի կողմից 3(3)(ա) հոդվածին համապատասխան տրամադրված պիտակը եւ մատակարարի կողմից 3(3)(գ) հոդվածին համապատասխան տրամադրված՝ այդ համալիր սարքավորման տեխնիկական բնութագրերին համապատասխան պատշաճորեն լրացված տեղեկաթերթիկը.
- բ) վաճառքի, վարձակալության կամ ապառիկ վաճառքի համար առաջարկված պինդ վառելիքով աշխատող կաթսայից, լրացուցիչ տաքացուցիչներից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած համալիր սարքավորումները, որոնց դեպքում չի կարող ակնկալվել, որ վերջնական սպառողն արտադրանքը կտեսնի ցուցադրված վիճակում, շուկայահանվեն VI հավելվածի 2-րդ կետին համապատասխան տրամադրված տեղեկություններով՝ բացառությամբ այն դեպքի, երբ առաջարկը ներկայացվել է համացանցի միջոցով, որի դեպքում կիրառվում են VII հավելվածի դրույթները.

- գ) պինդ վառելիքով աշխատող կաթսայի, լրացուցիչ տաքացուցիչների, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած համալիր սարքավորման կոնկրետ մոդելին վերաբերող եւ էներգիայի սպառման կամ գնի մասին տեղեկություններ պարունակող ցանկացած գովազդ ներառի այդ մոդելի համար էներգաարդյունավետության դասի մասին նշում.
- դ) պինդ վառելիքով աշխատող կաթսայից, լրացուցիչ տաքացուցիչներից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած համալիր սարքավորման կոնկրետ մոդելին վերաբերող տեխնիկական գովազդային ցանկացած նյութ, որը պարունակում է դրանց բնորոշ տեխնիկական պարամետրերը, ներառի այդ մոդելի համար էներգաարդյունավետության դասի մասին նշում:

### *Հոդված 5*

#### **Չափման եւ հաշվարկման մեթոդները**

3-րդ եւ 4-րդ հոդվածների համաձայն տրամադրվելիք տեղեկությունները ձեռք են բերվում չափման եւ հաշվարկման հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի մեթոդների կիրառմամբ, որոնք հիմնվում են VIII հավելվածով սահմանված՝ չափման եւ հաշվարկման համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից մեթոդների վրա: Էներգաարդյունավետության ինդեքսը հաշվարկվում է IX հավելվածով սահմանված կարգով:



### Հոդված 6

#### **Շուկայի վերահսկողության նպատակներով իրականացվող ստուգման ընթացակարգը**

Սույն կանոնակարգի հետ պինդ վառելիքով աշխատող կաթսաների, պինդ վառելիքով աշխատող կաթսայից, լրացուցիչ տաքացուցիչներից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած համալիր սարքավորումների էներգաարդյունավետության հայտարարված դասի համապատասխանությունը գնահատելիս անդամ պետությունները կիրառում են X հավելվածով սահմանված ընթացակարգը:

### Հոդված 7

#### **Վերանայումը**

Հանձնաժողովը պետք է ոչ ուշ, քան մինչեւ 2022 թվականի հունվարի 1-ը տեխնոլոգիական առաջընթացի լույսի ներքո վերանայի սույն կանոնակարգը: Մասնավորապես, վերանայմամբ պետք է գնահատվի, թե արդյոք նպատակահարմար է համակցված կաթսաների համար նախատեսված պիտակի վրա ավելացնել ջրային ջեռուցման էներգաարդյունավետության դասը:

### Հոդված 8

#### **Ուժի մեջ մտնելը**

1. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում* դրա հրապարակման օրվան հաջորդող քսաներորդ օրը:

2. Այն կիրառելի է 2017 թվականի ապրիլի 1-ից: Այնուամենայնիվ, 3(1)(գ) եւ (է) հոդվածը, 3(3)(գ) եւ (է) հոդվածը, 4(1)(բ), (գ) եւ (դ) հոդվածը եւ 4(2)(բ), (գ) եւ (դ) հոդվածը կիրառելի են 2017 թվականի հուլիսի 1-ից:

Սույն կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր եւ անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Բրյուսելում 2015 թվականի ապրիլի 27-ին:

*Հանձնաժողովի կողմից՝*

*Նախագահ*

Ժան-Կլոդ ՅՈՒՆԿԵՐ

---

*ՀԱՎԵԼՎԱԾ I***II-X հավելվածների նկատմամբ կիրառելի սահմանումները**

II-X հավելվածների նպատակով կիրառվում են հետևյալ սահմանումները.

- 1) «մոդելի նույնականացուցիչ» նշանակում է ծածկագիր, սովորաբար տառաթվային, որով պինդ վառելիքով աշխատող կաթսայի կամ պինդ վառելիքով աշխատող կաթսայից, լրացուցիչ տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած համալիր կոնկրետ մոդելը տարբերակվում է միեւնույն ապրանքային նշանով, մատակարարի անվամբ կամ վաճառողի անվամբ այլ մոդելներից.
- 2) «սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետություն» կամ « $\eta_u$ » նշանակում է պինդ վառելիքով աշխատող կաթսայի կողմից մատակարարվող՝ ջեռուցման սեզոնի համար սենքի ջեռուցման համար նախատեսված պահանջարկի եւ այդ պահանջարկը բավարարելու համար անհրաժեշտ տարեկան էներգասպառման միջեւ հարաբերակցությունը՝ արտահայտված %-ով.
- 3) «էլեկտրական ՕԳԳ» կամ « $\eta_{el}$ » նշանակում է էլեկտրաէներգիայի սպառման եւ պինդ վառելիքով աշխատող կոգեներացման կաթսայի էներգիայի ընդհանուր սպառման հարաբերակցությունը, որով էներգիայի ընդհանուր սպառումն արտահայտվում է ԱԱԶԱ-ով կամ վերջնական էներգիայով՝ բազմապատկած ՓԳ-ով.
- 4) «այրման առավելագույն ջերմատվության արժեք» կամ «ԱԱԶԱ» նշանակում է համապատասխան խոնավություն պարունակող վառելիքի միավոր քանակության կողմից անջատված ընդհանուր ջերմաքանակը, երբ այդ վառելիքն ամբողջությամբ այրվում է թթվածնով, եւ երբ այրման արգասիքները վերադառնում են շրջակա միջավայրի ջերմաստիճանին. այս քանակը ներառում է վառելիքում պարունակվող ցանկացած ջրածնի այրման հետեւանքով առաջացած ջրային գոլորշու խտացման ջերմությունը.

- 5) «փոխարկման գործակից» կամ «ՓԳ» նշանակում է գործակից, որն արտացոլում է Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2012/27/ԵՄ հրահանգում նշված՝ ԵՄ-ում էլեկտրաէներգիայի արտադրության արդյունավետության միջին գործակցի գնահատված 40%-ը<sup>1</sup>. փոխարկման գործակցի արժեքն է՝  $\Phi = 2,5$ .
- 6) «ջերմաստիճանի կարգավորման սարքի տեղեկաթերթիկ» նշանակում է արտադրանքի տեղեկաթերթիկ, որը Հանձնաժողովի թիվ 811/2013 պատվիրակված կանոնակարգի (ԵՄ) 3(3)(ա) հոդվածով պահանջվում է տրամադրել ջերմաստիճանի կարգավորման սարքերի համար.
- 7) «կաթսայի տեղեկաթերթիկ» նշանակում է արտադրանքի տեղեկաթերթիկ, որը սույն կանոնակարգի 3(1)(գ) հոդվածով պահանջվում է տրամադրել պինդ վառելիքով աշխատող կաթսաների համար, իսկ պինդ վառելիքով աշխատող կաթսաներից բացի այլ կաթսաների համար՝ արտադրանքի տեղեկաթերթիկ, որը Հանձնաժողովի թիվ 811/2013 պատվիրակված կանոնակարգի (ԵՄ) 3(1)(բ) հոդվածով պահանջվում է տրամադրել այդ կաթսաների դեպքում.
- 8) «արեւային սարքի տեղեկաթերթիկ» նշանակում է արտադրանքի տեղեկաթերթիկ, որը Հանձնաժողովի թիվ 811/2013 պատվիրակված կանոնակարգի (ԵՄ) 3(4)(ա) հոդվածով պահանջվում է տրամադրել արեւային սարքերի համար.
- 9) «ջերմային պոմպի տեղեկաթերթիկ» նշանակում է արտադրանքի տեղեկաթերթիկ, որը Հանձնաժողովի թիվ 811/2013 պատվիրակված կանոնակարգի (ԵՄ) 3(1)(բ) հոդվածով պահանջվում է տրամադրել ջերմային պոմպերի համար.

---

<sup>1</sup>2009/125/ԵՀ եւ 2010/30/ԵՄ հրահանգները փոփոխող եւ 2004/8/ԵՀ եւ 2006/32/ԵՀ հրահանգներն ուժը կորցրած ճանաչող՝ «էներգաարդյունավետության մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 25-ի 2012/27/ԵՄ հրահանգ (ՊՏ L 315, 14.11.2012թ., էջ 1):

- 10) «կոնդենսացիոն կաթսա» նշանակում է պինդ վառելիքով աշխատող կաթսա, որում գործարկման բնականոն պայմաններում եւ ջրի գործարկման տվյալ ջերմաստիճաններում ջրային գոլորշին մասամբ կոնդենսացվում է այրման արգասիքներում՝ այդ ջրային գոլորշու տեսակարար ջերմությունը ջեռուցման նպատակներով օգտագործելու նպատակով.
- 11) «փայտային այլ կենսազանգված» նշանակում է 25 % կամ դրանից պակաս խոնավության պարունակությամբ գերանի փայտից, 15 % կամ դրանից բարձր խոնավության պարունակությամբ կոտրված փայտից, պելետներից եւ բրիկետների տեսքով սեղմված փայտից կամ 50%-ին հավասար կամ դրանից պակաս խոնավության պարունակությամբ փայտաթեփից բացի այլ փայտային կենսազանգված.
- 12) «խոնավության պարունակություն» նշանակում է պինդ վառելիքով աշխատող կաթսաներում օգտագործվող վառելիքում ջրի զանգվածի հարաբերակցությունը վառելիքի ընդհանուր զանգվածի նկատմամբ.
- 13) «այլ հանածո վառելիք» նշանակում է բիտումային ածուխից, շագանակագույն ածուխից (այդ թվում՝ բրիկետներից), գետնածուխից, անտրացիտից կամ խառնված հանածո վառելիքի բրիկետներից բացի այլ հանածո վառելիք.
- 14) «էլեկտրական հզորությանը ներկայացվող պահանջներն առավելագույն ջերմատվության դեպքում» կամ «էլստավ» նշանակում է պինդ վառելիքով աշխատող կաթսաների էլեկտրաէներգիայի սպառումը նոմինալ ջերմատվության դեպքում՝ արտահայտված կՎտ-ով՝ բացառությամբ երկդիրք տաքացուցչի եւ արտանետումների մաքրման համար ներառված օժանդակ սարքավորումների կողմից էլեկտրականության սպառման.
- 15) «էլեկտրական հզորությանը ներկայացվող պահանջները նվազագույն ջերմատվության դեպքում» կամ «էլստավ» նշանակում է պինդ վառելիքով աշխատող կաթսաների էլեկտրաէներգիայի սպառումը կիրառվող մասնակի

բեռնվածքի դեպքում՝ արտահայտված կՎտ-ով՝ բացառությամբ երկդիրք տաքացուցչի եւ արտանետումների մաքրման համար ներառված օժանդակ սարքավորումների կողմից էլեկտրականության սպառման.

- 16) «երկդիրք տաքացուցիչ» նշանակում է Ջոուլի էֆեկտին համապատասխանող՝ էլեկտրական դիմադրություն ունեցող ջերմատարր, որը ջերմություն է արտադրում միայն նրա համար, որ թույլ չտրվի, որ պինդ վառելիքով աշխատող կաթսաները կամ ջրային կենտրոնական ջեռուցման համակարգը սառչեն, կամ այն ժամանակ, երբ ջերմության արտաքին աղբյուրների մատակարարումը խափանվում է (այդ թվում՝ սպասարկման ժամանակահատվածում) կամ չի աշխատում.
- 17) «կիրառելի մասնակի բեռնվածք» նշանակում է վառելիքով ինքնաբար բեռնվող՝ պինդ վառելիքով աշխատող կաթսաների դեպքում նոմինալ ջերմատվության 30%-ի չափով գործարկում, ձեռքով տաքացվող՝ պինդ վառելիքով աշխատող այն կաթսաների համար, որոնք կարող են գործարկվել նոմինալ ջերմատվության 50 %-ի չափով՝ նոմինալ ջերմատվության 50 %-ի չափով գործարկում.
- 18) «սպասման ռեժիմում էլեկտրաէներգիայի սպառում» կամ «P<sub>off</sub>» նշանակում է պինդ վառելիքով աշխատող կաթսաների էլեկտրաէներգիայի սպառումը սպասման ռեժիմում՝ բացառությամբ կՎտ-ով արտահայտված արտանետումների մաքրման համար ներառված օժանդակ սարքավորումների.
- 19) «սպասման ռեժիմ» նշանակում է վիճակ, որում պինդ վառելիքով աշխատող կաթսան միացված է էլեկտրասնուցման աղբյուրին, նախատեսված ձեռով աշխատելու համար կախված է էլեկտրասնուցման աղբյուրից ստացվող էներգիայից եւ ապահովում է միայն հետեւյալ ֆունկցիաները, որոնք կարող են շարունակվել անորոշ ժամանակով՝ վերաակտիվացման ֆունկցիա կամ վերաակտիվացման ֆունկցիա եւ միայն ակտիվացված վերաակտիվացման ֆունկցիայի մասին նշում կամ տեղեկությունների կամ կարգավիճակի ցուցադրում ցուցադրիչի վրա.

- 20) «սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունն ակտիվ ռեժիմում» կամ «*ηամφωγ.*» նշանակում է՝
- ա) վառելիքով ինքնաբար բեռնվող՝ պինդ վառելիքով աշխատող կաթսաների դեպքում՝ օգտակար արդյունավետության կշռված միջինը նոմինալ ջերմատվության դեպքում եւ օգտակար արդյունավետությունը 30 % նոմինալ ջերմատվության դեպքում.
  - բ) վառելիքը ձեռքով բեռնվող՝ պինդ վառելիքով աշխատող այն կաթսաների համար, որոնք կարող են շարունակաբար գործարկվել 50 % նոմինալ ջերմատվությամբ՝ օգտակար արդյունավետության կշռված միջինը եւ օգտակար արդյունավետությունը 50 % նոմինալ ջերմատվության դեպքում՝,
  - գ) վառելիքը ձեռքով բեռնվող՝ պինդ վառելիքով աշխատող այն կաթսաների համար, որոնք չեն կարող շարունակաբար գործարկվել 50% կամ դրանից պակաս նոմինալ ջերմատվությամբ՝ օգտակար արդյունավետությունը նոմինալ ջերմատվության դեպքում.
  - դ) պինդ վառելիքով աշխատող կոգեներացման կաթսաների համար՝ օգտակար արդյունավետությունը նոմինալ ջերմատվության դեպքում.
- 21) «օգտակար արդյունավետություն» կամ «η» նշանակում է պինդ վառելիքով աշխատող կաթսայի օգտակար ջերմատվության եւ էներգիայի ընդհանուր սպառման հարաբերակցությունը, որով էներգիայի ընդհանուր սպառումն արտահայտվում է *ԱԱԶԱ-ով* կամ վերջնական էներգիայով՝ բազմապատկած  $\Phi\theta$ -ով.
- 22) «օգտակար ջերմատվություն» կամ «P» նշանակում է պինդ վառելիքով աշխատող կաթսայի ջերմատվությունը, որը փոխանցվում է ջերմակրին՝ արտահայտված կՎտ-ով,

- 23) «հանաժո վառելիքով աշխատող կաթսա» նշանակում է պինդ վառելիքով աշխատող կաթսա, որի նախընտրելի վառելիքը հանաժո վառելիքն է կամ կենսազանգվածի եւ հանաժո վառելիքի խառնուրդը.
- 24) «այրման առավելագույն ջերմատվության արժեք՝ առանց խոնավության» կամ «ԱԱՋԱ<sub>այր</sub>» նշանակում է համապատասխան խոնավություն պարունակող վառելիքի միավոր քանակության կողմից անջատված ընդհանուր ջերմաքանակը, երբ այդ վառելիքն ամբողջությամբ այրվում է թթվածնով, եւ երբ այրման արգասիքները վերադառնում են շրջակա միջավայրի ջերմաստիճանին. այս քանակը ներառում է վառելիքում պարունակվող ցանկացած ջրածնի այրման հետեւանքով առաջացած ջրային գոլորշու խտացման ջերմությունը.
- 25) «համարժեք մոդել» նշանակում է մոդել, որը շուկայահանվել է V հավելվածի 1-ին կետի 4-րդ աղյուսակում սահմանված տեխնիկական նույն պարամետրերով, ինչ միեւնույն մատակարարի կողմից շուկայահանված մեկ այլ մոդել:
-



## ՀԱՎԵԼՎԱԾ II

**Էներգաարդյունավետության դասերը**

Պինդ վառելիքով աշխատող կաթսայի էներգաարդյունավետության դասը որոշվում է դրա էներգաարդյունավետության ինդեքսի հիման վրա, ինչպես սահմանված է 1-ին աղյուսակում:

Պինդ վառելիքով աշխատող կաթսայի էներգաարդյունավետության ինդեքսը հաշվարկվում է IX հավելվածին համապատասխան:

## Աղյուսակ 1

**Պինդ վառելիքով աշխատող կաթսաների  
էներգաարդյունավետության դասերը**


Էներգաարդյունավետության դասը	Էներգաարդյունավետության ինդեքսը (ԷԱԻ)
A <sup>+++</sup>	$ԷԱԻ \geq 150$
A <sup>++</sup>	$125 \leq ԷԱԻ < 150$
A <sup>+</sup>	$98 \leq ԷԱԻ < 125$
A	$90 \leq ԷԱԻ < 98$
B	$82 \leq ԷԱԻ < 90$
C	$75 \leq ԷԱԻ < 82$
D	$36 \leq ԷԱԻ < 75$
E	$34 \leq ԷԱԻ < 36$
F	$30 \leq ԷԱԻ < 34$
G	$ԷԱԻ < 30$

ՀԱՎԵԼՎԱԾ III

Պիտակները

1. ՊԻՆԴ ՎԱՌԵԼԻՔՈՎ ԱՇԽԱՏՈՂ ԿԱԹՍԱՆԵՐ

1.1. Պիտակ 1



I, II

III

IV

V


VI, VII

- ա) Պիտակում պետք է ընդգրկվեն հետևյալ տեղեկությունները՝
- I. մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը.
  - II. մատակարարի մոդելի նույնականացուցիչը.
  - III. սենքի ջեռուցման ֆունկցիան.
  - IV. էներգաարդյունավետության դասը՝ սահմանված II հավելվածին համապատասխան. պինդ վառելիքով աշխատող կաթսայի էներգաարդյունավետության դասը պարունակող սլաքի ծայրը պետք է գտնվի նույն բարձրության վրա, ինչ էներգաարդյունավետության համապատասխան դասի սլաքի ծայրը.
  - V. նոմինալ ջերմատվությունը կՎտ-ով՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը.
  - VI. համակցված կաթսաների դեպքում՝ նաեւ ջրային ջեռուցման լրացուցիչ ֆունկցիան.
  - VII. պինդ վառելիքով աշխատող կոգեներացման կաթսաների դեպքում՝ էլեկտրաէներգիայի արտադրության լրացուցիչ ֆունկցիան:
- բ) Պինդ վառելիքով աշխատող կաթսաների պիտակի դիզայնին վերաբերող ասպեկտները պետք է համապատասխանեն սույն հավելվածի 3-րդ կետին: Որպես բացառություն, եթե Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 66/2010 կանոնակարգով (ԵՀ)<sup>1</sup> մոդելին շնորհվել է «ԵՄ էկոպիտակ», ապա կարող է ավելացվել ԵՄ էկոպիտակի պատճենը:

---

<sup>1</sup> «ԵՄ էկոպիտակի մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 66/2010 (ԵՀ) կանոնակարգ (ՊՏ L 27, 30.1.2010թ., էջ 1):

1.2. Պիտակ 2




ա) Պիտակում պետք է ներառվեն սույն հավելվածի 1.1(ա) կետում թվարկված տեղեկությունները:

- բ) Պինդ վառելիքով աշխատող կաթսաների պիտակի դիզայնին վերաբերող ասպեկտները պետք է համապատասխանեն սույն հավելվածի 3-րդ կետին: Որպես բացառություն, եթե Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 66/2010 կանոնակարգով (ԵՀ) մոդելին շնորհվել է «ԵՄ էկոպիտակ», ապա կարող է ավելացվել ԵՄ էկոպիտակի պատճենը:

2. ՊԻՆԴ ՎԱՌԵԼԻՔՈՎ ԱՇԽԱՏՈՂ ԿԱԹՍԱՅԻՑ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԱՔԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՑ, ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՐԵՎԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ՀԱՄԱԼԻՐ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Էներգաարդյունավետության A+++ -G դասերին պատկանող՝ պինդ վառելիքով աշխատող կաթսայից, լրացուցիչ տաքացուցիչներից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեային սարքերից բաղկացած համալիր սարքավորումների պիտակը




- ա) Պիտակում պետք է ընդգրկվեն հետևյալ տեղեկությունները՝
- I. վաճառողի կամ մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը.
  - II. վաճառողի կամ մատակարարի մոդելի (մոդելների) նույնականացուցիչը.
  - III. սենքի ջեռուցման ֆունկցիան.
  - IV. պինդ վառելիքով աշխատող կաթսայի էներգաարդյունավետության դասը՝ սահմանված II հավելվածին համապատասխան.
  - V. նշում այն մասին, թե արդյոք արեւային կուտակիչը, ունակային ջրատաքացուցիչը, ջերմաստիճանի կարգավորման սարքը կամ լրացուցիչ տաքացուցիչը կարող են ընդգրկվել պինդ վառելիքով աշխատող կաթսայից, լրացուցիչ տաքացուցիչներից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած համալիր սարքավորման կազմում.
  - VI. պինդ վառելիքով աշխատող կաթսայից, լրացուցիչ տաքացուցիչներից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած համալիր սարքավորման էներգաարդյունավետության դասը՝ սահմանված IV հավելվածի 2-րդ կետին համապատասխան. պինդ վառելիքով աշխատող կաթսայից, լրացուցիչ տաքացուցիչներից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած համալիր սարքավորման էներգաարդյունավետության դասը պարունակող սլաքի ծայրը պետք է գտնվի նույն բարձրության վրա, ինչ էներգաարդյունավետության համապատասխան դասի սլաքի ծայրը:
- բ) Պինդ վառելիքով աշխատող կաթսայից, լրացուցիչ տաքացուցիչներից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած

համալիր սարքավորումների պիտակի դիզայնին վերաբերող ասպեկտները պետք է համապատասխանեն սույն հավելվածի 4-րդ կետին: Ջրային ջեռուցման էներգաարդյունավետության A+++ -D դասերին պատկանող՝ պինդ վառելիքով աշխատող կաթսայից, լրացուցիչ տաքացուցիչներից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած համալիր սարքավորումների դեպքում A+++ -G սանդղակի E - G դասերը կարելի է բաց թողնել:



3. ՊԻՆԴ ՎԱՌԵԼԻՔՈՎ ԱՇԽԱՏՈՂ ԿԱԹՍԱՆԵՐԻ ՊԻՏԱԿԻ ԴԻՉԱՅՆԸ ՊԵՏՔ Է ՈՒՆԵՆԱ ՀԵՏԵՎՅԱԼ ՁԵՎԸ՝



որտեղ՝

ա) պիտակը պետք է ունենա առնվազն 105 մմ լայնություն եւ 200 մմ բարձրություն: Եթե պիտակը տպագրվում է ավելի մեծ ձեւաչափով, ապա դրա բովանդակությունը, այնուամենայնիվ, պետք է մնա վերը նշված տեխնիկական մասնագրերին համապատասխանող.

բ) հետնաշերտը պետք է լինի սպիտակ.

գ) գույները պետք է ունենան ԿԿԴՍ ծածկագիրը՝ կապտականաչ, կարմրամանուշակագույն, դեղին եւ սեւ՝ հետեւյալ օրինակի համաձայն՝ 00-70-X-00՝ 0 % կապտականաչ, 70 % կարմրամանուշակագույն, 100 % դեղին, 0 % սեւ.

դ) Պիտակը պետք է բավարարի հետեւյալ բոլոր պահանջները (թվերը վերաբերում են վերոնշյալ պատկերին).

1. **ԵՄ պիտակի եզրագիծը՝** 4 կետ, գույնը՝ 100 % կապտականաչ, կլոր անկյունները՝ 3.5 մմ:

2. **ԵՄ պատկերանիշը՝** Գույները՝ X-80-00-00 եւ 00-00-X-00:

3. **Էներգապիտակը՝** Գույնը՝ X-00-00-00: Գրաֆիկական պատկերը՝ ինչպես պատկերված է՝ ԵՄ պատկերանիշ + Էներգաարդյունավետության պիտակ՝ լայնությունը՝ 86 մմ, բարձրությունը՝ 17 մմ:

4. **Պատկերանիշի տակ գտնվող գիծը՝** 1 կետ, գույնը՝ 100 % կապտականաչ, երկարությունը՝ 86 մմ:

5. **Սենքի ջեռուցման ֆունկցիան՝**

— **Գրաֆիկական պատկերը՝** ինչպես պատկերված է:

6. **Համապատասխանաբար A<sup>++</sup>-G եւ A<sup>+++</sup>-D սանդղակները՝**

— **Սլաքը՝** բարձրությունը՝ 5 մմ, տարածությունը՝ 1.3 մմ, գույները՝

Ամենաբարձր դասը՝ X-00-X-00,

Երկրորդ դասը՝ 70-00-X-00,

Երրորդ դասը՝ 30-00-X-00,

Չորրորդ դասը՝ 00-00-X-00,

Հինգերորդ դասը՝ 00-30-X-00,

Վեցերորդ դասը՝ 00-70-X-00,

Յոթերորդ դասը՝ 00-X-X-00,

Ութերորդ դասը՝ 00-X-X-00,

Վերջին դասը՝ 00-X-X-00:

— **Տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 14 կետ, գլխատառերով, սպիտակ, «+» պայմանանշանները՝ տողավերելի, գտնվում են մեկ շարքի վրա:

— **Սլաքը՝** բարձրությունը՝ 7 մմ, տարածությունը՝ 1 մմ, գույները՝

Ամենաբարձր դասը՝ X-00-X-00,

Երկրորդ դասը՝ 70-00-X-00,

Երրորդ դասը՝ 30-00-X-00,

Չորրորդ դասը՝ 00-00-X-00,

Հինգերորդ դասը՝ 00-30-X-00,

Վեցերորդ դասը՝ 00-70-X-00,

Վերջին դասը՝ 00-X-X-00:

— **Տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 16 կետ, գլխատառերով, սպիտակ, «+» պայմանանշանները՝ տողավերելի, գտնվում են մեկ շարքի վրա:

## 7. Էներգաարդյունավետության դասը՝

— **Սլաքը՝** լայնությունը՝ 22 մմ, բարձրությունը՝ 12 մմ, 100 % սեւ,

- **Տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 24 կետ, գլխատառերով, սպիտակ, «+» պայմանանշանները՝ տողավերելի, գտնվում են մեկ շարքի վրա:

#### **8. Նոմինալ ջերմատվությունը՝**

- **Եզրագիծը՝** 2 կետ, գույնը՝ երկնագույն 100 %, կլոր անկյունները՝ 3.5 մմ,
- **«YZ» արժեքը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 45 կետ, 100 % սեւ,
- **«կՎտ» տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական 30 կետ, 100 % սեւ:

#### **9. Զրային ջեռուցման ֆունկցիան՝**

- **Գրաֆիկական պատկերը՝** ինչպես պատկերված է,
- **Եզրագիծը՝** 2 կետ, գույնը՝ 100 % կապտականաչ, կլոր անկյունները՝ 3.5 մմ:

#### **10. Էլեկտրաէներգիայի ֆունկցիան՝**

- **Գրաֆիկական պատկերը՝** ինչպես պատկերված է,
- **Եզրագիծը՝** 2 կետ, գույնը՝ 100 % կապտականաչ, կլոր անկյունները՝ 3.5 մմ:

#### **11. Պիտակի ներմուծման տարին եւ կանոնակարգի համարը.**


- **Տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 10 կետ:

#### **12. Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը:**

#### **13. Մատակարարի մոդելի նույնականացուցիչը.**

Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը եւ մոդելի նույնականացուցիչը պետք է տեղավորվեն 86 x 12 մմ տարածքում:

4. ՊԻՆԴ ՎԱՌԵԼԻՔՈՎ ԱՇԽԱՏՈՂ ԿԱԹՍԱՅԻՑ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԱՔԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՑ, ԶԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՐԵՎԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ՀԱՄԱԼԻՐ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՊԻՏԱԿԻ ԴԻՋԱՅՆԸ ՊԵՏՔ Է ՌԻՆԵՆԱ ՀԵՏԵՎՅԱԼ ՁԵՎԸ՝



որտեղ՝

ա) պիտակը պետք է ունենա առնվազն 210 մմ լայնություն եւ 297 մմ բարձրություն: Եթե պիտակը տպագրվում է ավելի մեծ ձեւաչափով, ապա դրա բովանդակությունը, այնուամենայնիվ, պետք է մնա վերը նշված տեխնիկական մասնագրերին համապատասխանող.

բ) հետնաշերտը պետք է լինի սպիտակ.

գ) գույները պետք է ունենան ԿԿԴՍ ծածկագիրը՝ կապտականաչ, կարմրամանուշակագույն, դեղին եւ սեւ՝ հետեւյալ օրինակի համաձայն՝ 00-70-X-00՝ 0 % կապտականաչ, 70 % կարմրամանուշակագույն, 100 % դեղին, 0 % սեւ.

դ) Պիտակը պետք է բավարարի հետեւյալ բոլոր պահանջները (թվերը վերաբերում են վերոնշյալ պատկերին)՝

1. **ԵՄ պիտակի եզրագիծը՝** 6 կետ, գույնը՝ 100 % կապտականաչ, կլոր անկյունները՝ 3.5 մմ:

2. **ԵՄ պատկերանիշը՝** Գույները՝ X-80-00-00 եւ 00-00-X-00:

3. **Էներգապիտակը՝** Գույնը՝ X-00-00-00: Գրաֆիկական պատկերը՝ ինչպես պատկերված է՝ ԵՄ պատկերանիշ + էներգաարդյունավետության պիտակ՝ լայնություն՝ 191 մմ, բարձրություն՝ 37 մմ:

4. **Պատկերանիշի տակ գտնվող եզրագիծը՝** 2 կետ, գույնը՝ 100 % կապտականաչ, երկարությունը՝ 191 մմ:

5. **Սենքի ջեռուցման ֆունկցիան՝**

— Գրաֆիկական պատկերը՝ ինչպես պատկերված է:

6. **Պինդ վառելիքով աշխատող կաթսա՝**

— Գրաֆիկական պատկերը՝ ինչպես պատկերված է:

Պինդ վառելիքով աշխատող կաթսայի  
էներգաարդյունավետության դասը

**Սլաքը՝** լայնությունը՝ 24 մմ, բարձրությունը՝ 14 մմ, 100 % սեւ:

- **Տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 28 կետ, գլխատառերով, սպիտակ, «+» պայմանանշանները՝ տողավերելի, գտնվում են մեկ շարքի վրա:
- **Եզրագիծը՝** 3 կետ, գույնը՝ 100 % կապտականաչ, կլոր անկյունները՝ 3.5 մմ:

**7. Արեային կուտակիչներից, ունակային ջրատաքացուցից, ջերմաստիճանի կարգավորման սարքերից եւ լրացուցիչ տաքացուցիչներից բաղկացած համալիր սարքավորում՝**

- **Գրաֆիկական պատկերը՝** ինչպես պատկերված է,
- «+» **պայմանանշանը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 50 կետ, 100 % կապտականաչ,
- **Վանդակները՝** լայնությունը՝ 12 մմ, բարձրությունը՝ 12 մմ, եզրագիծը՝ 4 կետ, 100 % կապտականաչ,
- **Եզրագիծը՝** 3 կետ, գույնը՝ 100 % կապտականաչ, կլոր անկյունները՝ 3.5 մմ:

**8. A<sup>+++</sup>-G սանդղակը՝ եզրագծով՝**

- **Սլաքը՝** բարձրությունը՝ 15 մմ, տարածությունը՝ 3 մմ, գույները՝

Ամենաբարձր դասը՝ X-00-X-00,

Երկրորդ դասը՝ 70-00-X-00,

Երրորդ դասը՝ 30-00-X-00,

Չորրորդ դասը՝ 00-00-X-00,

Հինգերորդ դասը՝ 00-30-X-00,

Վեցերորդ դասը՝ 00-70-X-00,

Յոթերորդ դասը՝ 00-X-X-00,

Անհրաժեշտության դեպքում, վերջին դասերը՝ 00-X-X-00:

- **Տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 30 կետ, գլխատառերով, սպիտակ, «+» պայմանանշանները՝ տողավերելի, գտնվում են մեկ շարքի վրա:
- **Եզրագիծը՝** 3 կետ, գույնը՝ 100 % կապտականաչ, կլոր անկյունները՝ 3.5 մմ:

**9. Պինդ վառելիքով աշխատող կաթսայից, լրացուցիչ տաքացուցիչներից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած համալիր սարքավորումների էներգաարդյունավետության դասը՝**

- **Սլաքը՝** լայնությունը՝ 33 մմ, բարձրությունը՝ 19 մմ, 100 % սեւ,
- **Տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 40 կետ, գլխատառերով, սպիտակ, «+» պայմանանշանները՝ տողավերելի, գտնվում են մեկ շարքի վրա:

**10. Պիտակի ներմուծման տարին եւ կանոնակարգի համարը.**

- **Տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 12 կետ:

**11. Վաճառողի կամ մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը:**

**12. Վաճառողի կամ մատակարարի մոդելի նույնականացուցիչը.**

Վաճառողի կամ մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը եւ մոդելի նույնականացուցիչը պետք է տեղավորվեն 191 x 19 մմ տարածքում:



*ՀԱՎԵԼՎԱԾ IV***Արտադրանքի տեղեկաթերթիկը****1. ՊԻՆԴ ՎԱՌԵԼԻՔՈՎ ԱՇԽԱՏՈՂ ԿԱԹՍԱՆԵՐ**

1.1. Պինդ վառելիքով աշխատող կաթսայի արտադրանքի տեղեկաթերթիկում պարունակվող տեղեկությունները պետք է տրամադրվեն հետեւյալ հաջորդականությամբ եւ պետք է ներառվեն արտադրանքի վերաբերյալ բուկլետում կամ արտադրանքի հետ տրամադրվող այլ փաստաթղթերում՝

ա) մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը.

բ) մատակարարի մոդելի նույնականացուցիչը.

գ) մոդելի էներգաարդյունավետության դասը՝ սահմանված II հավելվածի համաձայն.

դ) նոմինալ ջերմատվությունը կՎտ-ով՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը.

ե) էներգաարդյունավետության ինդեքսը՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը եւ հաշվարկված IX հավելվածին համապատասխան.

զ) սենքի ջեռուցման էներգաարդյունավետության ինդեքսը %-ով՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը եւ հաշվարկված VIII հավելվածին համապատասխան.

է) ցանկացած հատուկ նախազգուշական միջոց, որը պետք է ձեռնարկել պինդ վառելիքով աշխատող կաթսաների հավաքման, տեղադրման կամ սպասարկման համար.

ը) պինդ վառելիքով աշխատող կոգեներացման կաթսաների դեպքում էներգաարդյունավետությունը %-ով՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը:

1.2. Արտադրանքի մեկ տեղեկաթերթիկում կարող են ընդգրկվել նույն մատակարարի կողմից մատակարարված՝ պինդ վառելիքով աշխատող կաթսաների մի շարք մոդելներ:

1.3. Արտադրանքի տեղեկաթերթիկում պարունակվող տեղեկությունները կարող են ներկայացվել պիտակի պատճենի տեսքով՝ գունավոր կամ սեւ ու սպիտակ: Այս դեպքում 1.1 կետում նշված տեղեկությունները, որոնք դեռեւս ներկայացված չեն պիտակի վրա, նույնպես պետք է տրամադրվեն:

2. ՊԻՆԴ ՎԱՌԵԼԻՔՈՎ ԱՇԽԱՏՈՂ ԿԱԹՍԱՅԻՑ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԱՔԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՑ, ԶԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՐԵՎԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ՀԱՄԱԼԻՐ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Պինդ վառելիքով աշխատող կաթսայից, լրացուցիչ տաքացուցիչներից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեային սարքերից բաղկացած համալիր սարքավորումների տեղեկաթերթիկը համապատասխանաբար պետք է պարունակի 1-ին կամ 2-րդ նկարում սահմանված տեղեկությունները՝ առաջարկվող համալիր սարքավորման էներգարդյունավետության ինդեքսը գնահատելու համար, այդ թվում՝ հետեւյալ տեղեկությունները՝

ա) I. պինդ վառելիքով աշխատող առաջնային կաթսաների էներգարդյունավետության ինդեքսի արժեքը.

բ) II. համապատասխանաբար սույն հավելվածի 2-րդ եւ 3-րդ աղյուսակներում նշված համալիր սարքավորման պինդ վառելիքով աշխատող առաջնային կաթսայի եւ լրացուցիչ տաքացուցիչների ջերմատվությունը չափելու գործակիցը.

գ) III. մաթեմատիկական արտահայտության արժեքը՝ 294/(11 · Առ.), որտեղ Առ.-ը վերաբերում է պինդ վառելիքով աշխատող առաջնային կաթսային.

- դ) IV. մաթեմատիկական արտահայտության արժեքը՝  $115/(11 \cdot Առ.)$ , որտեղ  $Առ.$ -ը վերաբերում է պինդ վառելիքով աշխատող առաջնային կաթսային:

### Աղյուսակ 2

#### Պինդ վառելիքով աշխատող առաջնային կաթսայի եւ լրացուցիչ տաքացուցչի չափումը՝ սույն հավելվածի 1-ին նկարի նպատակներով <sup>1</sup>

$P_{լրաց.}/(Առ. + P_{լրաց.})^{(*)}$	II, համալիր սարքավորում՝ առանց ունակային ջրատաքացուցչի	II, համալիր սարքավորում ունակային ջրատաքացուցչով
0	0	0
0,1	0,30	0,37
0,2	0,55	0,70
0,3	0,75	0,85
0,4	0,85	0,94
0,5	0,95	0,98
0,6	0,98	1,00
$\geq 0,7$	1,00	1,00

(\*)  $Առ.$ -ը վերաբերում է պինդ վառելիքով աշխատող առաջնային կաթսային

<sup>1</sup> Միջանկյալ արժեքները հաշվարկում են երկու հարակից արժեքների միջև գծային միջարկման միջոցով:

## Աղյուսակ 3

**Պինդ վառելիքով աշխատող կոգեներացման առաջնային կաթսայի եւ լրացուցիչ տաքացուցչի չափումը՝ սույն հավելվածի 2-րդ նկարի<sup>1</sup> նպատակներով**

$U_n / (U_n + P_{լրաց.}) (*)$	II, համալիր սարքավորում՝ առանց ունակային ջրատաքացուցչի	II, համալիր սարքավորում ունակային ջրատաքացուցչով
0	1,00	1,00
0,1	0,70	0,63
0,2	0,45	0,30
0,3	0,25	0,15
0,4	0,15	0,06
0,5	0,05	0,02
0,6	0,02	0
$\geq 0,7$	0	0

(\*)  $U_n$ -ը վերաբերում է պինդ վառելիքով աշխատող առաջնային կաթսային:

<sup>1</sup> Միջանկյալ արժեքները հաշվարկում են երկու հարակից արժեքների միջեւ գծային միջարկման միջոցով:

Նկար 1

**Պինդ վառելիքով աշխատող կաթսաների համար պինդ վառելիքով աշխատող կաթսայից, լրացուցիչ տաքացուցիչներից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած համալիր սարքավորման արտադրանքի պիտակի վրա ներկայացվող տեղեկությունները՝ նշելով առաջարկվող համալիր սարքավորման էներգաարդյունավետության ինդեքսը**

Պինդ վառելիքով աշխատող կաթսայի էներգաարդյունավետության ինդեքսը 1 'I'

Ջերմաստիճանի կարգավորման սարք  
**Ջերմաստիճանի կարգավորման տեղեկաթերթիկից**

Դաս I=1, Դաս II=2, Դաս III= 1.5, Դաս IV=2, Դաս V=3, Դաս VI= 4, Դաս VII=3.5, Դաս VIII=5,

+ 2

Լրացուցիչ կաթսա  
**Կաթսայի տեղեկաթերթիկից**

Սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասը (%-ով) կամ էներգաարդյունավետության ինդեքսը

( 3 - 'I' ) x 0.1 = ± 3

Արեւային էներգիայի մասնաբաժինը

Արեւային սարքի տեղեկաթերթիկից

Կուտակիչի չափը (մ<sup>2</sup>-ով)

Բաքի ծավալը (մ<sup>3</sup>-ով)

Կուտակիչի արդյունավետությունը (%-ով)

Բաքի դասը  
 A\* = 0.95, A = 0.91,  
 B = 0.86, C = 0.83,  
 D-G = 0.81

( 'III' x 4 + 'IV' x 4 ) x 0.9 x ( 4 / 100 ) x 4 = + 4

Լրացուցիչ ջերմային պոմպը  
**Ջերմային պոմպի տեղեկաթերթիկից**

Տարածքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը (%-ով)

( 5 - 'I' ) x 'II' = + 5

Արեւային էներգիայի մասնաբաժինը եւ լրացուցիչ ջերմային պոմպը

Ընդորոշ ավելի փոքր արժեք

0.5 x 4 **ԿԱՄ** 0.5 x 5 = - 6

Համալիր սարքավորման էներգաարդյունավետության ինդեքսը 7 7



*Սույն տեղեկաթերթիկով նախատեսված արտադրանքից բաղկացած համալիր սարքավորման էներգասարդյունավետությունը կարող է չհամապատասխանել շենքում տեղադրվելուց հետո դրա փաստացի էներգասարդյունավետությանը, քանի որ այդ արդյունավետության վրա ազդում են այլ գործոններ, ինչպիսիք են բաշխման համակարգում ջերմության կորուստը եւ շենքի չափերի ու տեխնիկական բնութագրերի նկատմամբ արտադրանքի հզորության սահմանումը:*

Նկար 2

**Պինդ վառելիքով աշխատող կոգեներացման կաթսաների համար պինդ վառելիքով աշխատող կաթսայից, լրացուցիչ տաքացուցիչներից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեային սարքերից բաղկացած համալիր սարքավորման արտադրանքի պիտակի վրա ներկայացվող տեղեկությունները՝ նշելով առաջարկվող համալիր սարքավորման էներգաարդյունավետության ինդեքսը**

Պինդ վառելիքով աշխատող կոգեներացման կաթսայի էներգաարդյունավետության ինդեքսը 1

'I'

---

Ջերմաստիճանի կարգավորման սարք  
Ջերմաստիճանի կարգավորման տեղեկաթերթիկից

Դաս I=1, Դաս II=2, Դաս III= 1.5,  
 Դաս IV=2, Դաս V=3, Դաս VI= 4,  
 Դաս VII=3.5, Դաս VIII=5,

2

+

---

Լրացուցիչ կաթսա  
Կաթսայի տեղեկաթերթիկից

Սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասը (%-ով) կամ էներգաարդյունավետության ինդեքսը

$( \text{[ ]} - 'I' ) \times 'II' =$

3

-

---

Արեային էներգիայի մասնաբաժինը  
Արեային սարքի տեղեկաթերթիկից

Կոտակիչի չափը (մ<sup>2</sup>-ով)

Բացի ծավալը (մ<sup>2</sup>-ով)

Կոտակիչի արդյունավետությունը (%-ով)

Բացի դասը  
 A<sup>+</sup> = 0.95, A = 0.91,  
 B = 0.86, C = 0.83,  
 D-G = 0.81

$( 'III' \times \text{[ ]} + 'IV' \times \text{[ ]} ) \times 0.7 \times ( \text{[ ]} / 100 ) \times \text{[ ]} =$

4

+

---

Համալիր սարքավորման էներգաարդյունավետության ինդեքսը 5

[ ]

---

Համալիր սարքավորման էներգաարդյունավետության դասը

G	F	E	D	C	B	A	A <sup>+</sup>	A <sup>++</sup>	A <sup>+++</sup>
<30	≥30	≥34	≥36	≥75	≥82	≥90	≥98	≥125	≥150

Սույն տեղեկաթերթիկով նախատեսված արտադրանքից բաղկացած համալիր սարքավորման էներգասարդյունավետությունը կարող է չհամապատասխանել շենքում տեղադրվելուց հետո դրա փաստացի էներգասարդյունավետությանը, քանի որ այդ արդյունավետության վրա ազդում են այլ գործոններ, ինչպիսիք են բաշխման համակարգում ջերմության կորուստը եւ շենքի չափերի ու տեխնիկական բնութագրերի նկատմամբ արտադրանքի հզորության սահմանումը:

---



*ՀԱՎԵԼՎԱԾ V***Տեխնիկական փաստաթղթերը****1. ՊԻՆԴ ՎԱՌԵԼԻՔՈՎ ԱՇԽԱՏՈՂ ԿԱԹՍԱՆԵՐ**

Պինդ վառելիքով աշխատող կաթսաների համար 3(1)(ե) հոդվածում նշված տեխնիկական փաստաթղթերը պետք է ներառեն՝

- ա) մատակարարի անվանումը եւ հասցեն.
- բ) մոդելի նույնականացուցիչը.
- գ) անհրաժեշտության դեպքում՝ հղումներ՝ կիրառված ներդաշնակեցված ստանդարտներին.
- դ) եթե նախընտրելի վառելիքը, ինչպես նշված է 4-րդ աղյուսակում, այլ փայտային կենսազանգվածը, ոչ փայտային կենսազանգվածը, այլ հանածո վառելիք կամ կենսազանգվածի եւ հանածո վառելիքի այլ խառնուրդ է՝ վառելիքի նկարագրությունը, որը բավարար է արտադրանքի միանշանակ նույնականացման համար, եւ վառելիքի տեխնիկական ստանդարտը կամ մասնագիրը, այդ թվում՝ չափված խոնավության պարունակությունը եւ չափված մոխրի պարունակությունը, իսկ այլ հանածո վառելիքի համար՝ նաեւ վառելիքի ցնդող նյութի չափված պարունակությունը.
- ե) անհրաժեշտության դեպքում՝ օգտագործված մյուս տեխնիկական ստանդարտները եւ մասնագրերը.
- զ) մատակարարի համար պարտավորություններ սահմանելու լիազորություն ունեցող անձի անունը եւ ստորագրությունը.
- է) 4-րդ աղյուսակում ներառված տեղեկությունները՝ դրա տեխնիկական պարամետրերով, որոնք չափվել եւ հաշվարկվել են VIII եւ IX հավելվածներին համապատասխան.

- ը) մատակարարների կողմից կամ նրանց անունից անցկացված փորձարկումների արդյունքների մասին հաշվետվություններ, այդ թվում՝ փորձարկումն անցկացրած մարմնի անվանումն ու հասցեն.
- թ) ցանկացած հատուկ նախազգուշական միջոց, որը պետք է ձեռնարկել պինդ վառելիքով աշխատող կաթսաների հավաքման, տեղադրման կամ սպասարկման համար.
- ժ) կիրառելիության դեպքում՝ համարժեք մոդելների ցանկը:

Այս տեղեկությունները կարելի է համակցել Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009/125/ԵՀ հրահանգի համաձայն սահմանված միջոցներին համապատասխան ներկայացված տեխնիկական փաստաթղթերի հետ<sup>1</sup>:

---

<sup>1</sup> «Էներգասպառող արտադրանքին ներկայացվող էկոնախազձման պահանջներ մշակելու համար շրջանակ սահմանելու մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009 թվականի հոկտեմբերի 21-ի 2009/125/ԵՀ հրահանգ (ՊՏ L 285, 31.10.2009թ., էջ 10):

*Աղյուսակ 4*

**Պինդ վառելիքով աշխատող կաթսաների եւ պինդ վառելիքով աշխատող կոզներացման կաթսաների տեխնիկական պարամետրերը**

Մոդելի նույնականացուցիչը

Վառելիքի բեռնման ռեժիմը՝ [ձեռքով. կաթսան պետք է գործարկվի առնվազն x (\*) լիտր/ավտոմատ ծավալով ունակային ջրատաքացուցչով. առաջարկվում է, որ կաթսան գործարկվի առնվազն x (\*\*)  
լիտր/ավտոմատ ծավալով ունակային ջրատաքացուցչով]

Կոնդենսացիոն կաթսա՝ [այո/ոչ]

Պինդ վառելիքով աշխատող կոզներացման կաթսա՝ [այո/ոչ]      Համակցված կաթսա՝ [այո/ոչ]

<b>Վառելիք</b>	<b>Նախընտրելի վառելիք (միայն մեկը)՝</b>	<b>Համապատասխան այլ վառելիք (վառելիքներ)՝</b>
Գերան, ≤ 25 % խոնավության պարունակությամբ	[այո/ոչ]	[այո/ոչ]
Կոտրատված փայտ, 15-35 % խոնավության պարունակությամբ	[այո/ոչ]	[այո/ոչ]
Կոտրատված փայտ, > 35 % խոնավության պարունակությամբ	[այո/ոչ]	[այո/ոչ]
Պելետների եւ բրիկետների տեսքով սեղմված փայտ	[այո/ոչ]	[այո/ոչ]
Փայտաթեփ, ≤ 50 % խոնավության պարունակությամբ	[այո/ոչ]	[այո/ոչ]
Փայտային այլ կենսազանգված	[այո/ոչ]	[այո/ոչ]
Ոչ փայտային կենսազանգված	[այո/ոչ]	[այո/ոչ]
Բիտումային ածուխ	[այո/ոչ]	[այո/ոչ]
Շագանակագույն ածուխ (այդ թվում՝ բրիկետներ)	[այո/ոչ]	[այո/ոչ]
Կոքս	[այո/ոչ]	[այո/ոչ]
Անտրացիտ	[այո/ոչ]	[այո/ոչ]
Հանածո վառելիքի խառնուրդների բրիկետներ	[այո/ոչ]	[այո/ոչ]
Այլ հանածո վառելիք	[այո/ոչ]	[այո/ոչ]
Կենսազանգվածի (30-70 %) եւ հանածո վառելիքի խառնուրդի բրիկետներ	[այո/ոչ]	[այո/ոչ]
Կենսազանգվածի եւ հանածո վառելիքի այլ խառնուրդ	[այո/ոչ]	[այո/ոչ]

**Բնութագրերը նախընտրելի վառելիքով աշխատելիս՝**

Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը  $\eta_w$  [%]՝

Էներգաարդյունավետության ինդեքսը (EUE)

Բաղադրիչ	Պայման անշան	Արժեք	Միավոր		Բաղադրիչ	Պայման անշան	Արժեք	Միավոր
Օգտակար ջերմատվություն					Օգտակար արդյունավետություն			
Նոմինալ ջերմատվության դեպքում	$P_{u, (***)}$	x,x	կՎտ		Նոմինալ ջերմատվության դեպքում	$\eta_u$	x,x	%
[30 %/50 %] նոմինալ ջերմատվության դեպքում, եթե կիրառելի է	$P_p$	[x,x/ Առկա չէ]	կՎտ		[30 %/50 %] նոմինալ ջերմատվության դեպքում, եթե կիրառելի է	$\eta_p$	[x,x/ Առկա չէ]	%
Պինդ վառելիքով աշխատող կոգեներացման կաթսաների համար՝ Էլեկտրական ՕԳԳ				<b>Էլեկտրաէներգիայի լրացուցիչ սպառում</b>				
				Նոմինալ ջերմատվության դեպքում	$E_{լստավ.}$	x,xxx	կՎտ	
Նոմինալ ջերմատվության դեպքում	$\eta_{էլ.ն.}$	x,x	%	[30 %/50 %] նոմինալ ջերմատվության դեպքում, եթե կիրառելի է	$E_{նվազ.}$	[x,xxx/ Առկա չէ]	կՎտ	
				Արտանետումների մաքրման համար ներառված օժանդակ սարքավորումների, եթե կիրառելի է		[x,xxx/ Առկա չէ]	կՎտ	
				Սպասման ռեժիմում	$P_{SB}$	x,xxx	կՎտ	
Կոնտակտային տվյալները	Մատակարարի անվանումն ու հասցեն							

(\*)  $P_{աքի ծավալը} = 45 \times P_r \times (1 - 2,7/P_r)$  կամ 300 լիտր՝ կախված նրանից, թե որն է ավելի բարձր՝ կՎտ-ում նշված  $P_r$ -ով

(\*\*)  $P_{աքի ծավալը} = 20 \times P_r$ ՝ կՎտ-ում նշված  $P_r$ -ով

(\*\*\*) Նախընտրելի վառելիքի համար  $P_u$  -ն հավասար է  $P_r$ -ի

2. ՊԻՆԴ ՎԱՌԵԼԻՔՈՎ ԱՇԽԱՏՈՂ ԿԱԹՍԱՅԻՑ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԱՔԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՑ, ԶԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՐԵՎԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ՀԱՄԱԼԻՐ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Պինդ վառելիքով աշխատող կաթսայից, լրացուցիչ տաքացուցիչներից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած համալիր սարքավորումների համար 3(3)(ե) հոդվածում նշված տեխնիկական փաստաթղթերը պետք է ներառեն՝

- ա) մատակարարի անվանումը եւ հասցեն.
- բ) պինդ վառելիքով աշխատող կաթսայից, լրացուցիչ տաքացուցիչներից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած համալիր սարքավորման մոդելի նկարագրությունը, որը բավարար է դրա միանշանակ նույնականացման համար.
- գ) անհրաժեշտության դեպքում՝ կիրառված ներդաշնակեցված ստանդարտների հղումները.
- դ) անհրաժեշտության դեպքում՝ հղումներ՝ օգտագործված մյուս տեխնիկական ստանդարտներին եւ մասնագրերին.
- ե) մատակարարի համար պարտավորություններ սահմանելու լիազորություններ ունեցող անձի նույնականացման տվյալները եւ ստորագրությունը.
- զ) տեխնիկական պարամետրերը՝
  - 1) էներգաարդյունավետության ինդեքսը՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը.
  - 2) սույն հավելվածի 1-ին կետում սահմանված տեխնիկական պարամետրերը եւ անհրաժեշտության դեպքում՝ Հանձնաժողովի թիվ 811/2013 պատվիրակված կանոնակարգի (ԵՄ) V հավելվածի 1-ին կետում սահմանված տեխնիկական պարամետրերը.

- 3) Հանձնաժողովի թիվ 811/2013 պատվիրակված կանոնակարգի (ԵՄ) V հավելվածի 3-րդ եւ 4-րդ կետերում սահմանված տեխնիկական պարամետրերը.
- է) ցանկացած հատուկ նախազգուշական միջոց, որը պետք է ձեռնարկել պինդ վառելիքով աշխատող կաթսայից, լրացուցիչ տաքացուցիչներից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած համալիր սարքավորումը հավաքելիս, տեղադրելիս կամ սպասարկելիս:
-

*ՀԱՎԵԼՎԱԾ VI*

**Տեղեկություններ, որոնք պետք է տրամադրվեն այն դեպքերում,  
երբ չի կարող ակնկալվել, որ վերջնական սպառողներն  
արտադրանքը կտեսնեն ցուցադրված վիճակում՝ բացառությամբ  
համացանցում տեղադրված տեղեկությունների**

## 1. ՊԻՆԴ ՎԱՌԵԼԻՔՈՎ ԱՇԽԱՏՈՂ ԿԱԹՍԱՆԵՐ

1.1. 4(1)(բ) հոդվածում նշված տեղեկությունները պետք է տրամադրվեն հետևյալ հաջորդականությամբ՝

ա) մոդելի էներգաարդյունավետության դասը՝ սահմանված II հավելվածին համապատասխան.

բ) նոմինալ ջերմատվությունը կՎտ-ով՝ կլորացված մինչև ամենամոտ ամբողջ թիվը.

գ) էներգաարդյունավետության ինդեքսը՝ կլորացված մինչև ամենամոտ ամբողջ թիվը եւ հաշվարկված IX հավելվածին համապատասխան.

դ) պինդ վառելիքով աշխատող կոգեներացման կաթսաների դեպքում՝ էլեկտրական ՕԳԳ-ն %-ով՝ կլորացված մինչև ամենամոտ ամբողջ թիվը:

1.2. Այն տառատեսակը եւ տառաչափը, որով 1.1 կետում նշված տեղեկությունները տպագրվում կամ ցուցադրվում են, պետք է լինեն ընթեռնելի:

2. ՊԻՆԴ ԿԱՌԵԼԻՔՈՎ ԱՇԽԱՏՈՂ ԿԱԹՍԱՅԻՑ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԱՔԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՑ, ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՐԵՎԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ՀԱՄԱԼԻՐ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ

2.1. 4 (2)(բ) հոդվածում նշված տեղեկությունները պետք է ներկայացվեն հետևյալ հաջորդականությամբ՝

ա) մոդելի էներգաարդյունավետության դասը՝ սահմանված II հավելվածին համապատասխան.

բ) էներգաարդյունավետության ինդեքսը՝ կլորացված մինչև ամենամոտ ամբողջ թիվը.

գ) համապատասխանաբար, IV հավելվածի 1-ին նկարում եւ 2-րդ նկարում սահմանված տեղեկությունները:

2.2. Այն տառատեսակը եւ տառաչափը, որով 2.1 կետում նշված տեղեկությունները տպագրվում կամ ցուցադրվում են, պետք է լինեն ընթեռնելի:

---



*ՀԱՎԵԼՎԱԾ VII***Համացանցի միջոցով վաճառքի, վարձակալության կամ ապառիկ վաճառքի դեպքում տրամադրվելիք տեղեկությունները**

1. Սույն հավելվածի 2-5-րդ կետերի իմաստով կիրառվում են հետևյալ սահմանումները.
  - ա) «ցուցադրման մեխանիզմ» նշանակում է ցանկացած էկրան, ներառյալ՝ սենսորային էկրան, կամ այլ տեսողական տեխնոլոգիաներ, որոնք օգտագործվում են համացանցային բովանդակությունն օգտագործողներին ցուցադրելու համար.
  - բ) «ներկառուցված ցուցադրիչ» նշանակում է տեսողական միջերես, որում պատկերը կամ տվյալների հավաքածուն հասանելի է դառնում մկնիկի կտտոցով, մկնիկը դրա վրայով անցկացնելով կամ մեկ այլ պատկերի կամ տվյալների հավաքածուի՝ սենսորային էկրանի ընդլայնմամբ.
  - գ) «սենսորային էկրան» նշանակում է հպմանն արձագանքող էկրան, ինչպես օրինակ՝ պլանշետային համակարգչինը կամ «խելացի» հեռախոսինը.
  - դ) «այլընտրանքային տեքստ» նշանակում է տեքստ, որը տրամադրվում է որպես այն գրաֆիկի այլընտրանք, որը թույլ է տալիս տեղեկությունները ներկայացնել ոչ գրաֆիկական ձևով, եթե ցուցադրող սարքերը չեն կարող վերարտադրել գրաֆիկը, կամ որպես հասանելիությանն օժանդակող միջոց, ինչպես օրինակ՝ մուտքագրում ձայնի սինթեզի ծրագրերում:
2. 3-րդ հոդվածի համաձայն մատակարարների կողմից տրամադրված համապատասխան պիտակը կամ համալիր սարքավորման դեպքում՝ 3-րդ հոդվածի համաձայն մատակարարների կողմից տրամադրված պիտակի եւ

տեղեկաթերթիկների հիման վրա անհրաժեշտության դեպքում պատշաճ ձեռով լրացված համապատասխան պիտակը ցուցադրվում է ցուցադրման մեխանիզմի վրա՝ արտադրանքի կամ համալիր սարքավորման գնի կողքին՝ համաձայն 3-րդ հոդվածում նշված ժամանակացույցի: Եթե ցուցադրվում են ե՛ւ արտադրանք, ե՛ւ համալիր սարքավորում, սակայն նշված է միայն համալիր սարքավորման գինը, ապա ցուցադրվում է միայն համալիր սարքավորման պիտակը: Պիտակի չափը պետք է լինի այնպիսին, որ այն լինի հստակ տեսանելի եւ ընթեռնելի, ինչպես նաեւ համապատասխանի III հավելվածում նշված չափին: Պիտակը կարող է ցուցադրվել ներկառուցված ցուցադրիչի միջոցով, որի դեպքում պիտակի հասանելիության համար օգտագործվող պատկերը պետք է համապատասխանի սույն հավելվածի 3-րդ կետում սահմանված մասնագրերին: Եթե կիրառվում է ներկառուցված ցուցադրիչ, ապա պիտակը պետք է հայտնվի մկնիկի առաջին կտտոցով, մկնիկը դրա վրայով անցկացնելով կամ պատկերի վրա սենսորային էկրանի ընդլայնմամբ:

3. Ներկառուցված ցուցադրիչի դեպքում պիտակի հասանելիության համար օգտագործվող պատկերը պետք է՝

ա) լինի պիտակի վրա նշված արտադրանքի կամ համալիր սարքավորման էներգաարդյունավետության դասին համապատասխանող գույնի սլաք.

բ) սլաքի վրա ցույց տա արտադրանքի կամ համալիր սարքավորման էներգաարդյունավետության դասը սպիտակ գույնով, գնի տառաչափին համարժեք տառաչափով. եւ

գ) ունենա հետեւյալ երկու ձեւաչափերից մեկը՝



4. Ներկառուցված ցուցադրիչի դեպքում պիտակի ցուցադրման հաջորդականությունը հետեւյալն է՝

- ա) սույն հավելվածի 3-րդ կետում նշված պատկերը պետք է ցուցադրվի ցուցադրման մեխանիզմի վրա՝ արտադրանքի կամ համալիր սարքավորման գնի կողքին.
  - բ) պատկերը պետք է պարունակի պիտակին արված հղում.
  - գ) պիտակը պետք է ցուցադրվի մկնիկի կտտոցով, մկնիկը դրա վրայով անցկացնելով կամ պատկերի վրա սենսորային էկրանի ընդլայնմամբ.
  - դ) պիտակը պետք է ցուցադրվի ելնող պատուհանով, նոր ներդիրով, նոր էջով կամ էկրանի ներդրված ցուցադրիչով.
  - ե) սենսորային էկրաններին պիտակի խոշորացման համար պետք է կիրառվեն սենսորային խոշորացման սարքերի պայմանական նշանները.
  - զ) պիտակի ցուցադրությունը պետք է ավարտվի «փակել» ընտրանքի կոճակի միջոցով կամ փակելու այլ ստանդարտ մեխանիզմով.
  - է) գրաֆիկի համար այլընտրանքային տեքստը, որը պետք է ցուցադրվի պիտակի ցուցադրության ձախողման դեպքում, պետք է լինի արտադրանքի կամ համալիր սարքավորման էներգաարդյունավետության դասը, որը պետք է ներկայացվի գնի տառաչափին համարժեք տառաչափով:
5. 3-րդ հոդվածի համաձայն մատակարարների կողմից տրամադրված՝ արտադրանքի համապատասխան տեղեկաթերթիկը պետք է ցուցադրվի ցուցադրման մեխանիզմի վրա՝ արտադրանքի կամ համալիր սարքավորման գնի կողքին: Արտադրանքի տեղեկաթերթիկի չափը պետք է լինի այնպիսին, որ այն լինի հստակ տեսանելի եւ ընթեռնելի: Արտադրանքի տեղեկաթերթիկը կարող է ցուցադրվել ներդրված ցուցադրիչի միջոցով, որի դեպքում տեղեկաթերթիկին հասանելի լինելու համար օգտագործվող հղման վրա պետք է հստակ եւ ընթեռնելի կերպով նշվի «Արտադրանքի տեղեկաթերթիկ»: Եթե օգտագործվում է ներկառուցված ցուցադրիչ, ապա

արտադրանքի տեղեկաթերթիկը պետք է հայտնվի մկնիկի առաջին կտտոցով, մկնիկը դրա վրայով անցկացնելով կամ հղման վրա սենսորային էկրանի ընդլայնմամբ:

---

*ՀԱՎԵԼՎԱԾ VIII***Չափումները եւ հաշվարկները**

1. Սույն կանոնակարգի պահանջների հետ համապատասխանությունն ապահովելու եւ ստուգելու նպատակներով իրականացվում են չափումներ եւ հաշվարկներ՝ ներդաշնակեցված ստանդարտների կիրառմամբ, որոնց հղումային համարներն այդ նպատակով հրապարակվել են *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում*, կամ հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի այլ մեթոդների կիրառմամբ, որոնք հիմնվում են համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից մեթոդների վրա: Դրանք պետք է համապատասխանեն 2-5-րդ կետերում սահմանված պայմաններին եւ տեխնիկական պարամետրերին:
2. Չափումների եւ հաշվարկների ընդհանուր պայմանները
  - ա) Պինդ վառելիքով աշխատող կաթսաները պետք է փորձարկվեն նախընտրելի վառելիքով:
  - բ) Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը կլորացվում է մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը:
3. Պինդ վառելիքով աշխատող կաթսաների սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության ընդհանուր պայմանները
  - ա) Օգտակար արդյունավետության արժեքները՝  $\eta_u$ ,  $\eta_p$  եւ օգտակար ջերմատվության արժեքները՝  $P_u$ ,  $P_p$  չափվում են ըստ անհրաժեշտության: Պինդ վառելիքով աշխատող կոգեներացման կաթսաների համար հաշվարկվում է նաեւ էլեկտրական ՕԳԳ-ի  $\eta_{el,u}$  արժեքը:
  - բ) Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը՝  $\eta_u$ , հաշվարկվում է ակտիվ ռեժիմում սենքի սեզոնային

Էներգաարդյունավետությամբ՝  $\eta_{u.միաց.}$ ՝ ճշգրտված ներդրումներով, որոնց համար հաշվի են առնվում ջերմաստիճանի կարգավորումը, էլեկտրաէներգիայի լրացուցիչ սպառումը, իսկ պինդ վառելիքով աշխատող կոգեներացման կաթսաների դեպքում՝ ավելացնելով էլեկտրական ՕԳԳ-ն բազմապատկած փոխարկման գործակցով՝ 2,5 ՓԳ-ով:

գ) էլեկտրասպառումը կրկնապատկվում է փոխակերպման գործակցով՝ 2,5 ՓԳ-ով:

4. Պինդ վառելիքով աշխատող կաթսաների սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության հատուկ պայմանները

ա) Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը՝  $\eta_u$ , սահմանվում է որպես՝

$$\eta_u = \eta_{u.միաց.} - F(1) - F(2) + F(3)$$

որտեղ՝

- 1)  $\eta_{u.միաց.}$ -ն ակտիվ ռեժիմում սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության գործակիցն է՝ արտահայտված տոկոսով, հաշվարկված 4(բ) հոդվածում սահմանված կարգով.
- 2)  $F(1)$ -ը պայմանավորված է սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության կորստով՝ շնորհիվ ջերմաստիճանի կարգավորման ճշգրտված ներդրումների.  $F(1) = 3\%$ .
- 3)  $F(2)$ -ը պայմանավորված է լրացուցիչ էլեկտրաէներգիայի բացասական ներդրմամբ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության մեջ, որն արտահայտվում է տոկոսով եւ հաշվարկվում է 4(գ) հոդվածում սահմանված կարգով.

- 4) F(3)-ը պայմանավորված է պինդ վառելիքով աշխատող կոգեներացման կաթսաների էլեկտրական ՕԳԳ-ի դրական ներդրմամբ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության մեջ, որն արտահայտվում է տոկոսով եւ հաշվարկվում է հետևյալ ձևով՝

$$F(3) = 2,5 \times \eta_{է.ն.}$$

- բ) ակտիվ ռեժիմում սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը՝  $\eta_{ս.միաց.}$ -ն, հաշվարկվում է հետևյալ ձևով՝

- 1) վառելիքը ձեռքով բեռնվող՝ պինդ վառելիքով աշխատող այն կաթսաների համար, որոնք կարող են շարունակաբար գործարկվել 50% նոմինալ ջերմատվության դեպքում, ինչպես նաև վառելիքով ինքնաբար բեռնվող՝ պինդ վառելիքով աշխատող կաթսաների համար՝

$$\eta_{ս.միաց.} = 0,85 \times \eta_p + 0,15 \times \eta_{ն.}$$

- 2) վառելիքը ձեռքով բեռնվող՝ պինդ վառելիքով աշխատող այն կաթսաների համար, որոնք չեն կարող շարունակաբար գործարկվել 50% կամ դրանից պակաս նոմինալ ջերմատվության դեպքում, ինչպես նաև պինդ վառելիքով աշխատող կոգեներացման կաթսաների համար՝

$$\eta_{ս.միաց.} = \eta_{ն.}$$

- գ) F(2)-ը հաշվարկվում է հետևյալ ձևով՝

- 1) վառելիքը ձեռքով բեռնվող՝ պինդ վառելիքով աշխատող այն կաթսաների համար, որոնք կարող են շարունակաբար

գործարկվել 50 նոմինալ ջերմատվության դեպքում, ինչպես նաև վառելիքով ինքնաբար բեռնվող՝ պինդ վառելիքով աշխատող կաթսաների համար՝

$$F(2) = 2,5 \times (0,15 \times t_{\text{առավ.}} + 0,85 \times t_{\text{սվազ.}} + 1,3 \times P_{\text{տր.}}) / (0,15 \times P_{\text{ս.}} + 0,85 \times P_{\text{ք.}})$$

- 2) վառելիքը ձեռքով բեռնվող՝ պինդ վառելիքով աշխատող այն կաթսաների համար, որոնք չեն կարող շարունակաբար գործարկվել 50 % կամ դրանից պակաս նոմինալ ջերմատվության դեպքում, ինչպես նաև պինդ վառելիքով աշխատող կոգեներացման կաթսաների համար՝

$$F(2) = 2,5 \times (t_{\text{առավ.}} + 1,3 \times P_{\text{տր.}}) / P_{\text{ս.}}$$

## 5. ԱՅՐՄԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՋԵՐՄԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

Այրման ջերմատվության արժեքը (ԱԱՋԱ) ձեռք է բերվում խոնավություն չպարունակող այրման ջերմատվության արժեքից (ԱԱՋԱ<sub>խս.</sub>)՝ կիրառելով հետևյալ փոխակերպումը՝

$$ԱԱՋԱ = ԱԱՋԱ_{\text{խս.}} \times (1 - M)$$

որտեղ՝

- ա) ԱԱՋԱ-ն եւ ԱԱՋԱ<sub>խս.</sub>-ն արտահայտված են մեգաջոուլ/կիլոգրամով.  
բ) M-ը վառելիքի խոնավության պարունակությունն է՝ արտահայտված որպես մասնաբաժին:

---



## ՀԱՎԵԼՎԱԾ IX

**Էներգաարդյունավետության ինդեքսի հաշվարկման մեթոդը**

1. Պինդ վառելիքով աշխատող կաթսաների էներգաարդյունավետության ինդեքսը (ԷԱԻ) պետք է հաշվարկվի նախընտրելի վառելիքի համար եւ կլորացվի մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը՝ հետեւյալ ձեւով.

$$\text{ԷԱԻ} = \eta_{\text{ս.միաց.}} \times 100 \times 4\text{ՊԳ} - F(1) - F(2) \times 100 + F(3) \times 100$$

որտեղ՝

- ա)  $\eta_{\text{ս.միաց.}}$ -ն ակտիվ ռեժիմում սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության գործակիցն է՝ հաշվարկված 4(բ) հոդվածում սահմանված կարգով.
- բ) 4ՊԳ-ն կենսազանգվածի պիտակի գործակիցն է, որը 1.45 է կենսազանգվածով աշխատող կաթսաների համար եւ 1՝ հանածո վառելիքով աշխատող կաթսաների համար.
- գ) F(1)-ը պայմանավորված է սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության ինդեքսի նկատմամբ բացասական ներդրումով՝ շնորհիվ ջերմաստիճանի կարգավորման ճշգրտված ներդրումների.  $F(1) = 3 \%$ .
- դ) F(2)-ը պայմանավորված է էլեկտրաէներգիայի լրացուցիչ սպառման բացասական ներդրմամբ էներգաարդյունավետության ինդեքսում եւ հաշվարկվում է VIII հավելվածի 4(գ) հոդվածում սահմանված կարգով.
- ե) F(3)-ը պայմանավորված է պինդ վառելիքով աշխատող կոգեներացման կաթսաների էլեկտրական ՕԳԳ-ի դրական ներդրմամբ սենքի սեզոնային ջեռուցման մեջ եւ հաշվարկվում է հետեւյալ ձեւով՝

$$F(3) = 2,5 \times \eta_{t, \hat{y}}$$

2. Պինդ վառելիքով աշխատող կաթսայից, լրացուցիչ տաքացուցիչներից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած համալիր սարքավորումների էներգաարդյունավետության ինդեքսը (ԷԱԻ) որոշվում է IV հավելվածի 2-րդ կետին համապատասխան:
-

*ՀԱՎԵԼՎԱԾ X***Շուկայի վերահսկողության նպատակներով իրականացվող  
ստուգման ընթացակարգը**

3-րդ եւ 4-րդ հոդվածներում սահմանված պահանջներին արտադրանքի համապատասխանությունը գնահատելու նպատակներով անդամ պետությունների մարմինները կիրառում են ստուգման հետեւյալ ընթացակարգը՝

1. անդամ պետությունների մարմինները պետք է փորձարկեն յուրաքանչյուր մոդելի մեկ միավոր: Միավորը պետք է փորձարկվի այնպիսի վառելիքով, որն ունի բնութագրերի նույն սանդղակը, ինչ այն վառելիքը, որը, VIII հավելվածին համապատասխան, արտադրողի կողմից օգտագործվել է չափումներն իրականացնելու համար:
2. Մոդելը համարվում է կիրառելի պահանջներին համապատասխանող, եթե՝
  - ա) պիտակի եւ արտադրանքի տեղեկաթերթիկի վրա առկա արժեքներն ու դասերը համապատասխանում են տեխնիկական փաստաթղթերում պարունակվող արժեքներին. եւ
  - բ) էներգաարդյունավետության ինդեքսը միավորի հայտարարված արժեքից ցածր է ոչ ավելի, քան 6 %-ով:
3. Եթե 2(ա) կետում նշված արդյունքը չի ապահովվում, ապա մոդելը եւ բոլոր մյուս համարժեք մոդելները համարվում են սույն կանոնակարգին չհամապատասխանող: Եթե 2(բ) կետում նշված արդյունքը չի ապահովվում, ապա անդամ պետությունների մարմինները պետք է փորձարկման համար պատահականության սկզբունքով ընտրեն նույն մոդելի երեք լրացուցիչ միավոր: Որպես այլընտրանք, ընտրված երեք լրացուցիչ միավորները կարող են լինել մեկ կամ մի քանի համարժեք մոդելների, որոնք մատակարարի տեխնիկական փաստաթղթերում թվարկվել են որպես համարժեք արտադրանք:

4. Մոդելը համարվում է կիրառելի պահանջներին համապատասխանող, եթե երեք լրացուցիչ միավորների էներգաարդյունավետության ինդեքսի միջինը միավորի հայտարարված արժեքից ցածր է ոչ ավելի, քան 6%-ով:
5. Եթե 4-րդ կետում նշված արդյունքները չեն ապահովվում, ապա մոդելը եւ բոլոր մյուս համարժեք մոդելները համարվում են սույն կանոնակարգին չհամապատասխանող: Անդամ պետությունների մարմինները մոդելի անհամապատասխանության վերաբերյալ որոշումը կայացնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, մյուս անդամ պետությունների մարմիններին եւ Հանձնաժողովին են տրամադրում փորձարկման արդյունքները եւ այլ համապատասխան տեղեկություններ:

Անդամ պետությունների մարմիններն օգտագործում են VIII եւ IX հավելվածներում սահմանված չափման եւ հաշվարկման մեթոդները:

Սույն հավելվածի 2(բ) եւ 4-րդ կետերում սահմանված՝ ստուգման առավելագույն թույլատրելի շեղումները վերաբերում են միայն անդամ պետությունների մարմինների կողմից չափված պարամետրերի ստուգմանը եւ չպետք է օգտագործվեն մատակարարի կողմից որպես տեխնիկական փաստաթղթերում արժեքներ սահմանելու համար թույլատրելի շեղումներ: Պիտակի վրա կամ արտադրանքի տեղեկաթերթիկում առկա արժեքները եւ դասերը մատակարարի համար չպետք է լինեն ավելի բարենպաստ, քան տեխնիկական փաստաթղթերում նշված արժեքները:

---